№ 7 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 12

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 12 № 7

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА НА 1907 Г.
на общественную, литературную и политич. ежедневн. газету

„Кавказская Рѣчь"

Годъ второй.

Газета «Кавк. Рѣчь» выходитъ въ Тифлисѣ каждый день, кромѣ дней послѣпраздничныхъ.

Съ 14-го января «КАВКАЗСКАЯ РѢЧЬ» начинаетъ выходить
ПОДЪ НОВОЙ РЕДАКЦІЕЙ Х. А. ВЕРМИШЕВА
и при новомъ составкѣ редакціи.

Подписка принимается въ главной конторѣ изданія: Тифлисъ, Дворцовая улица, домъ Грузинскаго Дворянства, и въ агенствахъ конторы.

I) Головинскій пр., 39, контора типграфіи Т. М. Ротиніанца, пртивъ цирка. II) Головинскій просп., 15, (уг. Барятинской ул.,) табач. магазинъ «Левъ», рядомъ съ «Артист. о-вомъ». III) Эриванская пл., книжный кіоскъ «Паросъ». IV) Штабная, ул. Дворцовой, книжный магазинъ «Гуттенбергъ».

Иногродніе обращаются исключително въ главн. контору газеты «Кавк. Рѣчь». Тифлисъ, Дворцовая ул., д. грузин. дворяанства.

(տո.) (ու. կ.) 1—2

ԲԱՑՎԱԾ Է ՆԱՂԴ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծաբանական-պատկերազարդ շաբաթաթերթի

Տարեկան գինն է՝ Թիֆլիսում	4 ր.	Ուրիշ տեղեր՝		5 ր.։	
Կէս տարվայ » »	2 ր.	»	»	2 ր. 50 կ.	
3 ամսվայ » » »	1 ր.	»	»	1 ր. 25 կ.	
1 ամսվայ » » »	— 40 կ.	»	»	— 50 կ.	

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի տարեկան բաժանորդները 1907 թւին, բացի 50 № թերթից ՁՐԻ ստանալու են. 1) գունաւոր ՏԱԽՏԱԿ-ՕՐԱՑՈՅՑ, 2) միջադիր խիստ շքեղ պատկեր՝ զանազան գոյներով տպված, 11×8 վերշոկ մեծութեամբ, որ ծառայելու է որպէս պատից կախելու ԶԱՐԴ—ՊԱՏԿԵՐ և 3) մի «ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», մօտ 200 միջադիր երեսներից բաղկացած, ուր մտնելու են եւրոպական և ռուսական նոր երգիծաբանական գրողների լաւագոյն գրուածքներից նմուշներ։

Ընդունում ենք ամեն լեզուներով յայտարարութիւններ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Хатабала».

Խմբագիր-Հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ. ե.) տո. 18—20

Յունվարի 15-ին, երկուշաբթի,
Լոյս կը տեսնէ

„ԱՆՆԱՄՈՒՍ“

երգիծաբանական շաբաթաթերթի առաջին համարը։

Բացված է բաժանորդագրութիւն

Թիֆլիսում տարեկան 4 րուբլի, օտար քաղաքներում 5 րուբլի, հատով 10 կոպէկ։ Ընդունվում են յայտարարութիւններ զանազան լեզուներով։ Խմբագրատունը բաց է ցերեկվայ 12—2 ժ., երեկոյեան 4—6 ժամը։ Հասցէն՝ Թիֆլիս, Սերգիեվսկայա № 3։

տո. 2—3

ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Գրական, քաղաքական, հասարակական շաբաթաթերթ

	Տարեկան	Վեց ամսուան
Թիֆլիս	4 ր. —	2 ր. 25 կ.
Գաւառ	4 ր. 50 կ.	2 ր. 50 կ.
Ամերիկա	3 դոլ.	1,75 դոլ.
Արտասահման	15 ֆր.	8 ֆր.
Պարսկաստան	5 ր. 50 կ.	3 ր.։

Խմբագրութեան հասցէն՝—Тифлисъ, редакція «Еркри Дзайнъ», Грибоѣдовская, № 16, д. Зубалова, կամ Tiflis, rédaction de l'«Erkri Dzaïn», Griboedovskaya, № 16, maison Zoubaloff.

Թիֆլիսում կարելի է բաժանորդագրուել և «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։

„ԱՇԽԱՏԱՆՔ“

Շաբաթաթերթ

Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է բացի խմբագրատնից՝ Бебутовская, № 56. նաև հետևեալ տեղերում՝

1) «Աշխատանքի» գրասենեակում, Дворцов. ул. д. Груз. Двор. № «Խաթաբալայի» խմբագրութեան կից։
2) «Гуттенбергъ» գրավաճառանոցում։
3) պ. Մատինեանի «Փարոս» կիօսկում, Երևանեան հրապարակի վրա։

Տարեկան բաժնեգինն է 4 րուբլի։

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսախանեան

ՄԱՍՆԱԳԷՏ՝

Ներքին և վեներական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդոնովի տանը։

տո. (չ.ու.չ.) 27—100

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՈ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի . երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ԽԱՆՋԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բգի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բգի և ականջի, երկ. երեք. և շաբ. 1 -2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն օր 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏՆՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք շաբ. 3—4 ժ.։
Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՅՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեք., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։
Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի ԶՈՒԴՆՕՎՍԿԻ }
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլէքտր. 4—6 ժամ.
Մ. Ե. ԴՕՐՕՖԵՑՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.
Ս. ԵԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Բժ. Կ Դ. ԴՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը։
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ, հինգշ. շաբ. 4—5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ստնտուների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

տո. (ա. օ.) 42—144

Այսօր, ուրբաթ, յունվարի 12-ին
Լոյս տեսաւ

№ 6 „ՀԱՅԵԼԻ“ № 6

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիտակցել կեանքը. Վերջին տեղեկութիւններ. Մամուլ. Նոր տարվայ առիթով. Ջիւանշիրի վիճակից. Նուիրաբերութիւն Քարամունջին. Անանուն հիւանդութիւն. Ընտրութիւնները Կովկասում. Կառավարչական շրջաններում. Եկեղեցական հարցը և ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը. Դպրոցներում. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Թիւրք նպաստամատոյցի գործունէութիւնը. Թատրօն և երաժշտութիւն. Ներկայացուցչական կառավարութիւն. Նամակ Կրասնօվօդսկից. Նամակ Ախալքաղաքից. Նամակ Սղնախից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Գերմանիան Ռուսաստանի և Անգլիայի դէմ Պարսկաստանում. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԳԻՏԱԿՑԵԼ ԿԵԱՆՔԸ

I

Կեանքի մէջ միշտ գործել են և գործում են որոշ հիմնական հայացակէտեր, որոշ յենակէտեր, որոնք և պայմանաւորում են մարդկանց գործելակերպերը։

Երբ կեանքի պայմանները փոխվում են, երբ նրա մէջ գործող հայեցակէտերը ենթարկվում են փոխոխութեան, այն ժամանակ և այդ կեանքի արտայայտութիւնը ստանում է նոր բնաւորութիւն, նոր գունաւորում։

Մի այնպիսի ժամանակում, ինչպէս է այն անցողական շրջանը, որի մէջ մենք գտնվում ենք, առաջ են եկել փոփոխութիւններ կեանքի վրա ազդող պայմանների և մարդկանց հայացակէտերի մէջ։ Եւ մեր երկիրն ու ժողովուրդը զգում են իրանց ճգնաժամի դրութեան մէջ, որովհետև մարդիկ չեն կարողանում իրանց հաշիւ տալ կեանքի բոլոր երեւոյթների վերաբերմամբ, չեն կարողանում վերածել նրանց որոշ դասաւորումների, պարզել հասարակական-գաղափարական հոսանքները և մշակել որոշ դիրքեր կեանքի պայքարի և անցողական շրջանի ժխորի մէջ։

Հասարակութիւնը տարուբերվում է շարժումների և հոսանքների մէջ, անկարող լինելով գիտակցական վերաբերմունք ունենալ նրանց նկատմամբ։

II

Սակայն ինչ են անում մարդիկ դժուար դրութիւնից դուրս գալու համար։

Դժբաղդաբար, նրանք շատ անգամ անում են բոլորովին հակառակը այն բանի, ինչ որ նրանք պէտք է գործէին։

Փոխանակ քննադատօրէն վերաբերվելու իրանց շրջապատին և աշխատելու գիտակցել կեանքի երեւոյթները և նրանց վրա ազդող պայմանները, նրանք փախուստ են տալիս կեանքի խնդիրներից, աշխատում են խուլ ձևանալ, քաշվում են հեռու մտաւոր հասարակական գործունէութիւնից և այդպիսով մատնում են կեանքը պատահականութեան խաղերին և քմահաճոյքին։

Իսկ կեանքը չէ սպասում։ Նա գնում է լաւ կամ վատ կերպով, նայած թէ ինչպէս են նրա վրա ազդող պայմանները։

Եւ եթէ մի օր իրականութիւնը հանդէս բերէ մի շարք անակնկալներ, նրանք կը լինեն անակնկալներ միայն այն մարդկանց համար, որոնք իրանց աչքերը և ականջները փակել էին և փախուստ տուել ներգործական վերաբերմունքից դէպի այն բոլոր պայմանները, որոնք ազդեցութիւն են գործել մարդկանց ուղեղների և կեանքի վրա։

III

Թէ մեր գործողները և թէ հասարակութիւնը իր ամբողջութեամբ իրաւունք չունեն կոյր ու խուլ ձևանալու կեանքի ընդհանուր երեւոյթների և հոսանքների վերաբերութեամբ։

Նրանք պէտք է մեծ ջանքեր գործ դնեն գիտակցելու պատմական այն րոպէն, որ նրանք անցնում են։

Եւ եթէ երբեւիցէ գաղափարական խնդիրները և կեանքի երեւոյթների ուսումնասիրութիւնը ունեցել են կարեւորութիւն, այժմ ամենալուրջ րոպէներից մէկն է, երբ պէտք է մանրամասն քննութեան ենթարկվեն թէ հասարակական-տնտեսական ու մտաւոր-բարոյական խնդիրները և թէ իրականութեան հանդէս բերած խոշոր երեւոյթները։

Եւ անկասկած՝ եթէ այդ կարեւոր գործը կատարված լինէր աւելի մեծ չափով, քան տեղի է ունեցել մեր մէջ, մենք աւելի նպաստաւոր դրութեան մէջ կը լինէինք և մեր մէջ եղած հասարակական համախմբումները աւելի խելացի ու գիտակցական բնաւորութիւն կունենային։

Սակայն ինչ որ չէ կատարվել և պակաս է մնացել, պէտք է լրացնել այժմ։

Մենք այդ մասին դեռ կը խօսենք։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեկտեմբերի 29-ին Մեղրու շրջանից մեզ գրում են, որ սրանից մի քանի օր առաջ Մեղրու շրջակայ գիւղերից մեկում, Կուրիս գիւղում, գողանում են անտառապահ Ղալազարի ձին և ջորին։

Որոնելու գնացողները հետքերի ուղղութեամբ գնում են Արաքսի ափից ոչ հեռու գտնվող Բիլեթ գիւղի վրայով և հասնում Օրդուբաթ քաղաքը։

Հետքը ակներև կերպով ապացուցանում է, որ գողացած գրաստները Օրդուբաթ են մտցված եղել։

Ղալազարը դիմում է Օրդուբաթի քաղաքային աւագինին և պահանջում իր գրաստները։ Վերջինս, գրաստատիրոջից 90 րուբլի փող ստանալով, վերադարձնում է ձին և ջորին, ասելով. «Այդ փողն այն քաջերի համար է, որոնք դոչաղութիւն են արել և ձեր գրաստները բերել են»։

Այդ դէպքի առիթով Ղալազարը խնդիրքով գանգատ է ներկայացրել ուր հարկն է։

—

Կ. Պոլիս, 10 յունվարի.—Յունվարի 9-ին, առաւօտեան ժամը $4^1/_2$, զգացվեց կարճատև, սակայն բաւական ուժեղ երկրաշարժ։

(«Հ. Գ.»)

—

Տող, դեկտեմբերի 26 ին

Թաղավարդ գիւղից (Վարանդա) լուր ստացվեց՝ իբր թէ գիւղից 12 մարդ գրաստներով ճանապարհվել են Կարեագին ցորեն գնելու, իսկ ճանապարհին Ղոջաբի (Թուրքի գիւղ) մօտ յարձակման ենթարկվել են թուրք աւազակային խմբի կողմից, որ շրջապատել է բոլորին և կողոպտել տանելով հայերի բոլոր գրաստները իրանց թոկերով ու չվալներով, ինչպէս և նրանց մօտ եղած փողերը։

Օտարական

—

Բաթում, 10 յունվարի.—Առաւօտեան ժամը 4-ին զգացվեցին ստորերկրեայ թեթև հարուածներ։ Պարբերաբար տեղացող անձրևները և սաստիկ փոթորիկները մեծ աւերմունքներ են գործել։ Վնասները ահագին են։

(«Հ. Գ.»)

—

Տող, դեկտեմբերի 28-ին

Աւետարանոց գիւղից (Վարանդա) հինգ հոգի գնացել են Կարեագին, գրաստներով ցորեն գնելու։ Երբ որ բեռները պատրաստել են, երկուսը շուտով ճանապարհ են ընկել, իսկ մնացած երեքը նրանց յետևից կէս ժամ ուշացել են։ Երբ որ վերջիններս ճանապարհվել են, տեսել են ճանապարհին, որ իրանց երկու ընկերներին թուրքերը բռնած տանում են իրանց բեռներով. իսկոյն երեք հոգին վերադառնում են Կարեագին և ոստիկանութեանը յայտնում. իսկոյն ուղարկում են կոզակներ, բայց չեն գտնում։ Տողիս հայերը յուսահատութեան մէջ են։ Վատ նշաններ են երեւում։

Օտարական

ՄԱՄՈՒԼ

«Страна» լրագրում Մ. Կօվալևսկին «Անցեալը և ապագան» խորագրով յօդուածում խօսելով առաջին Դումայի, նրա նշանակութեան և այն պայմանների մասին, որի մէջ գտնվում էր նա, նկատում է.

> Կան անցքեր, որոնց կարելի չէ ոչ մոռանալ, ոչ էլ լռութեամբ անցնել։ Այդպիսիների թւին է պատկանում առաջին Պետական Դումայի գումարումը...
>
> Ոչ մի բան չէ կարող ջնջել յիշողութիւնից այն փաստը, որ երկու ամսից աւելի շարունակ թնդում էր ժողովրդի ընտրեալների ազատ խօսքը և, լրագրների շնորհիւ, տարածվում էր ամբողջ երկրում։ Իսկ այդ խօսքը դատապարտում էր գոյութիւն ունեցող ամբողջ կարգերը, սկսած վերևից մինչև ներքև, անպատասխանատու մինիստրից մինչև անկօնտրօլ զեմսկի կառավարիչը։ Առաջին Դումայի ամբողջ նշանակութիւնը կայանում է հէնց այդ մերկացումների մէջ, նրան միջոց չը տուեցին օրգանական աշխատանքի համար։ Եթէ նա գոյութիւն ունենար մի երկու ամիս էլ—նա կը տար պատրաստի օրինակներ ևս ազատութիւնների մասին։ Մէկը արդէն վերջացած է և, երևի, կը ծառայէ ապագայ Դումայի զբաղմունքների համար։ Ես խորհուրդ կը տայի նրան ընդունել ամբողջապէս։ Այդ ամենալաւ միջոցն է պարզապէս ապացուցանելու, որ առաջին Դուման ապարդիւն չէ աշխատել և որ երկրորդ Դումայի պատգամաւորները մտադիր են շարունակել առաջին Դումայի պատգամաւորների բարի ձեռնարկութիւնները։

Ապա, ապացոյց բերելով Պետական Դումայում ժողովրդական ներկայացուցիչների արտասանած բոլոր ճառերը, խոստովանում է, որ

> ապագայ պատմաբանը այդ ճառերում առատ նիւթ կը գտնէ նկարագրելու մեր, յուսով եմ, անցողական, ոչ բացառապէս նիւթական անկման պատճառները և, մասնաւորապէս բնորոշելու համար այն, որին անգլիացիները վաղուց էին անուանում «պաշտօնական Ռուսաստանի բարոյական խելագարութիւն»։

Յօդուածագիրը ամենևին զարմանալի չէ համարում, եթէ այն ցաւալի պայմաններում, այն ապօրինութիւնների ու կամայականութիւնների տարափի տակ ժողովրդական խղճի օրգան Դուման ժողովրդական արդար զայրոյթի արտայայտիչ դարձաւ, անկարող եղաւ վստահութիւն ցոյց տալ դէպի պետական գանձարկղի մօտ կանգնած մարդիկը և տալ նրանց 15 միլիոնից աւելի գումար, նոյն իսկ այնպիսի անյետաձգելի նպատակի համար, ինչպիսին սովի դէմ մաքառելն է։ Նա եռանդուն կերպով զբաղվեց այնպիսի հարցերով, որոնք ժամանակակից էական նշանակութիւն ունէին, պէտք է դադրեցնէին քաղաքացիական պատերազմը և երկիրը դնէին կուլտուրական շաւղի վրա։ Բայց բիւրոկրատիան ամեն ջանք գործ դրեց վարկաբեկ անելու Դուման թէ Թագաւորի աչքում և թէ Եւրոպայի ղեկավարող շրջանների առաջ։ Առաջինը միայն աջողվեց նրան, և Դուման արձակվեց։ Այժմ նոյն պայմանների մէջ գալիս է Նոր Դուման։

> Փորձերից խրատված, նրանք ապագայ նիստերում կը մտաբերեն վաղեմի մի խորհուրդ. լինել ոչ միայն հեզ իբրև աղաւնի, այլ և իմաստուն ինչպէս օձերը։
>
> Որքան կարելի է քիչ վստահութիւն, բայց շատ յամառութիւն։ Ազատութիւնը ձեռք է բերվում երկար ու անընդհատ տոկուն ջանքերով։ Պատահաբար այսօր խըլված կարող է պատահաբար էլ վաղը անհետանալ։

*

Ֆրանսիական յայտնի գիտնական Անատոլ Լերուա-Բօլիէն, որ Պետական Դումայի նիստերին ամենայն օր յաճախում էր ուրիշ օտարերկրացիների թւում, «Страна» լրագրին ուղղած իր մի նամակում, իբրև Ռուսաստանի հին բարեկամ, բոլոր կուլտուրական երկիրների փորձերի հիման վրա, մատնանշում է այն մեծ վտանգը, որ սպառնում է Ռուսաստանին կառավարութեան կողմից ձեռք առնված բացարձակ և համատարած ճնշումների շնորհիւ առաջիկայ ընտրութիւնների վերաբերմամբ, որի նպատակն է ստեղծել իր ցանկացած Դուման։ Մինչդեռ

> երկրորդ Դուման,—ասում է նա,—պէտք է լինի երկրի ճշմարիտ ցուցմունքը, մինչդեռ կեղծիքը և ընտրութիւնների խեղաթիւրումը ուժի կամ խորամանկութեան օգնութեամբ, նոր հաստատութիւնների գործունէութիւնը կոչնչացնէ աւելի վաղ, քան թէ նրանք կը սկսեն գործել։

Այդ պատճառով արուեստական կերպով, խեղաթիւրելով ու կեղծիքներ անելով ժողովրդական ներկայացուցչութիւն ստեղծելը նա ոչ միայն անբարոյականութիւն է համարում, այլ և քաղաքական սխալ, իսկ միակ միջոցը Ռուսաստանը ներկայ անարխիայից ու բռնութիւններից ազատելու համար նա միայն տեսնում է ընտրողական լիակատար ազատութեան ու օրինականութեան մէջ։

> Զարիքը,—ասում է նա,—արմատացել է երկրի մտաւոր և բարոյական դրութեան մէջ. ուժով նրան անկարելի է ոչնչացնել. այստեղ հարկաւոր են բարոյական դեղեր, բժշկութիւն օրինականութեան միջոցով, որի մտցնելը ոստիկանութեան և բիւրոկրատիայի ուժերից բարձր է։

Յարգելի գիտնականը անյետաձգելի պահանջ է համարում բոլոր ազգութիւններին ու կրօններին հաւասարութիւն տալը օրէնքի առաջ։ Մասնաւորելով խօսքը հրէաների մասին, Լերուա-Բօլիէն նկատում է, որ հրէաներին յաճախ մեղադրում են, որ նրանք յաճախ զանազան տեսակ մահափորձերի հեղինակներ ու ձեռնարկողներն են։ Նրա կարծիքով, եթէ այդ իրաւ էլ լինի, պատճառը պէտք է վերագրել բացառիկ օրէնքներին և րեպրեսիաների ռեժիմին, որը հազիւ թէ համբերութեամբ կարողանային տանել սլաւոններն ու քրիստոնեաները։ Միևնոյն հրէաները անցնելով արտասահման բոլորովին խաղաղ և անվնաս մարդիկ են։

Ռուսաստանը ուզում է, որ հրէաները հրաժարվեն դաւադրութիւններից և տերրորներից. դրա համար բաւական է միայն, որ նա վերաբերվի նրանց այնպէս, ինչպէս վերաբերվում են Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ամերիկան։

ՆՈՐ ՏԱՐՎԱՅ ԱՌԻԹՈՎ

(Նամակ խմբագրութեան)

Ողջունում ենք «Մշակ»-ի երեսունհինգերորդ տարեշրջանը։ «Մշակ»-ը որոշ ծրագրով կանգնած լինելով ամուր հողի վրա, կարողացել է մինչև օրս մաքուր պահել իր հիմնադիրից ժառանգած դրօշակը։

Ով հետևել է «Մշակ»-ի ուղղութեանը, կը տեսնէ, որ երկար տարիների ընթացքում ինչ որ կատարել է նա, նոյնը ճշտութեամբ կատարում է և այսօր։ Երբեք իր սկզբունքին դաւաճան չի եղել։ Հէնց դա է այն մեծ գրաւականը և մեզ մխիթարողը, որ առիթ է տալիս յուսալու ապագայում ևս խելացի մարդկանց համակրութիւնը։

«Մշակ»-ը ծնունդ առաւ մի շարք ծանր և ճնշող պայմաններում։ Լրագրի մասին Կովկասի հայերը շատ քիչ գաղափար ունէին, բայց և այնպէս, ժամանակի ընթացքում, իր թարմ գաղափարներով ամեն տեղ մուտք ունեցաւ և գրաւեց հասարակութեան ուշադրութիւնը։

«Մշակ»-ը միշտ պաշտպան է հանդիսացել ճնշվածներին, հարստահարվածներին և ստրկացածներին, շարունակ կռիւ է մղել ազգի հոգևորականութեան և ժողովրդի շահերին հակառակ տարրերի դէմ։ Խաւարի դէմ լոյս է մտցրել ու բացել ժողովրդի աչքերը. նոյնը և այսօր է անում։

Ինչպէս անցեալում «Մշակ»-ը չէ խնայել նիւթական միջոցները և բարոյական ուժը կռուելու ազգային «ցեցերի» դէմ, որ տզրուկի պէս ծծում էին անպաշտպան գիւղացու արիւնը և ստրկացնում նրան, նոյնը կատարում է և այժմ։

«Մշակ»-ը քարոզել է սէր, համերաշխութիւն, կուլտուրա առանց խտրութեան բոլոր ազգութիւնների համար, որ սերտ կապ ունեն միմեանց հետ. նոյնը քարոզում է և այսօր։

Տարիների ընթացքում «Մշակ»-ը եղել է միակ թերթը, որ պահանջել է պարտաճանաչ լինել, ազնիւ և շիտակ վարվել, հաշիւ տալ, հաշիւ պահանջել,

Ամեն դժբախտութեան դէպքում առաջինը «Մշակ»-ն է եղել իր ազդու կոչով հրաւիրողը մարդասիրութեան զգացմունքին, բանալով թերթի էջերը նուիրատուութեան համար, ամոքելու թշուառների և աղէտեալների արցունքը։

Բայց հեշտ է ասելը՝ երկար, երեսունհինգ տարի շարունակ կռիւ մղել մեր «ազգային ջոջերի», աղաների և զանազան բախտախնդիրների դէմ։ Ինչքան թշնամիներ են ստեղծվել. հայհոյանք, հալածանք, սպառնալիք և այլն, բայց «Մշակը» համբերութեամբ կրել է ծանր խաչը իր ուսերի վրա, տանելով յաղթանակը. և այսօր էլ նոյն դերն է կատարում։

Այո, քանի ժողովրդի պաշտպան «Մշակը» կանգնած կը լինի իր կոչման բարձրութեան վրա, միշտ էլ կը տանի յաղթութիւնը։

Հասարակութիւնը գիտէ յարգել իր անկեղծ բարեկամին և պաշտպանին. թող չը յուսահատվի «Մշակ»-ը շարունակելու իր ընթացքը այն շաւղով, որով ընթացել է երեսունհինգ տարի. այն ժամանակ ժողովրդի հասունացած և թարմ ուժերի մեծամասնութիւնը իր կողմը կունենայ։

Աղ. Վրթանէսեան

ՋԻՎԱՆՇԻՐԻ ՎԻՃԱԿԻՑ

Առաջաձոր, դեկտեմբերի 23-ին

I

Համարեա ամեն օր մեր գաւառի հայկական գիւղօրայքում աչքի են ընկնում թուրքեր. նրանցից ոմանք ուղտերը նաւթով բարձած նաւթ են վաճառում հայերին, ոմանք էլ ձիաները բեռնած բրինձով, աղով և այլ մթերքներով վերջիններից են ծախում հայերին։ Հեռու տեղերից թուրքեր են գալիս մեր գաւառի՝ Խաչէնի ձորակում գտնվող Գանձասարի վանքապատկան ջրաղացաքարերի գործարանից քարեր գնելու։ Ուրախալի ընթացք....։ Կռիւ բան էլ չը կայ, բոյկօտ-մոյկօտ էլ չը կայ....։ Հայերն էլ են գնում թուրքական գիւղերը, բայց ոչ այնպէս, ինչպէս թուրքերը, և ոչ այնքան վստահ։ Թուրքերը յայտնում են, որ իրանք շատ են փոշմանել, որ անտեղի ընդհարվեցին հայերի հետ, աւելացնելով որ իրանք մեծ վնասներ են կրել ու չքաւորութեան դուռը հասել։ Առաջաձորից ոչ հեռու գտնվող՝ տխրահռչակ Սարխաւէնդեցիք, վերադառնալով իրանց աւերված գիւղը, յաճախակի երթևեկում են իրանց հարևան հայկական գիւղօրայքը։ Նրանք հայերին շինել են տալիս սայլեր, անիւներ (ակներ), արօրներ, խոփ ու ձեւիչներ, կացին և այլն։ Պէտք է նկատել, որ այդ թուրքերից վարպետներ ամենևին չը կան, ուստի առանց հայերի չեն կարողանում ապրել։ Սարխաւէնդցիք հիւր են գալիս հայերին ու վերջիններիս հիւր տանում։ Նրանցից (սարխաւէնդցիներից) «ամենահաչակաւորները ու ամենատխրահռչակները» աւելի սիրալիր բարեկամութիւն են անում՝ դաշնակցական զինւոր եղած անհատների հետ, այնքան վստահ կերպով, որ մինչև անգամ գիշերները իրար տան են մնում, իրար տան քնում։ Այդպիսի բարեկամութիւն շարունակողները մի ժամանակ աղ ու հացը, Աստծուն մոռացած և միանգամայն գազանային տենչով ու կրքերով վարակված իրար տուն էին հրդեհում, քանդում, տակն ու վրա անում ու ճանկը ընկած թշնամուն դէպի հրդեհը շպրտում, դաշոյնով կտոր-կտոր անում...։

Տունդ քանդվի, աշխարհ... այդ ինչպիսի բան ես դու։ Երէկ ինչ էիր, այժմ ինչ ես։ Երկու թշնամացած բանակների բարեկամութիւնները տեսնելով, խորթ բան է թւում շատերին, խորթ բան է երևում շատերի աչքին։ Սակայն, յամենայն դէպս, մենք ուրախ ենք, տեսնելով խաղաղութեան նշոյլները։ Մենք հայերս սիրում ենք խաղաղ կեանք, քրտնաթոր վաստակ ու կուլտուրական պարապմունք։ Մենք չենք սիրում կռիւը, բայց միևնոյն ժամանակը սիրում ենք ինքնապաշտպանութեան գործը և մեր պատիւը պաշտպանելը։ Այո, մենք սիրում ենք կուլտուրայով պարապվել և աւելի քան պատրաստ ենք, ուրախ ենք և սիրում ենք առաջ ընթանալ մեր հարևան այլադաւան ազգերի հետ միասին։ Սիրում ենք նրանց հետ ձեռք ձեռքի տուած գործել յանուն ընդհանուր հայրենիքի շահերի և ոչ թէ պարապվել աննպատակ կոտորածներով, վէճերով, ընդհարումներով։ Սիրում ենք, միայն թէ մեր հարևան մահմեդական ցեղը նորից չը վարակվի գազանային կրքերով...

II

Խաղաղութեան նշոյլները տեսնելով աւելի ուրախ են զգում իրանց մեր գաւառի Առաջաձոր գիւղում ապրող 15 տուն «ղարալար» անուանեալ թուրքերը և շատ երջանիկ են համարում իրանց, որ սարսափելի ընդհարումների ժամանակ, թէպէտ և շատ վախ զգացին, այնուամենայնիւ մնացին հայերի մէջ մինչև այսօր, աւելացնելով որ եթէ գնային ուրիշ տեղեր և այժմ էտ դառնային, այն ժամանակ ամենաչքաւոր ընտանիքները կը լինէին, իսկ այժմ, փառք «շըքիւր» Ալլահին, իրանք ամենից լաւ են...։ Այդ «ղարալար» թուրքերից մի քանի տուն, թողնելով տուն-տեղ, ընտանիքով տեղափոխվել էին ուրիշ թուրքական գիւղեր, այնտեղ ապահով ապրելու համար։ Նրանցից մի երկուսը վախենալուց էին փախել, իսկ մի երկու երեք անձնաւորութիւններին էլ ծնողներն էին ուղարկել, ասելով. «Գնացէք, որդիք. մենք որ կոտորվենք էլ, դուք էլի սաղ կը մնաք»։ Այժմ բոլորն էլ վերադարձել են և իրար կենդանի տեսնելով իրար վզով են փաթաթվում ու խոստացած «ղուրբանները» (մատաղները) մորթում։ Սակայն նորերս, այսինքն սոյն տարվայ գարնան վերջերքում և ամառը, միևնոյն թուրքերը վճռել էին, որ քոչեն Առաջաձորից, պատճառաբանելով որ իրանք մօլլա չունեն իրանց մէջ, իսկ ուրիշ տեղերից էլ մօլլա վախենում է գալու, ուստի իրանց հոգևոր օրէնքները կատարող չի լինում։ Ղարալար թուրքերը կամենալով հեռանալ Առաջաձորից ուզում էին հայ-ինքնապաշտպանութեան խմբապետին խնդրել, որ իրանց ապահով անցկացնէ հայկական գիւղօրայքով մինչև թիւրքական գիւղեր հասնելը։ Բայց նրանց կայացրած վճիռը չիրագործվեց, որովհետև խաղաղութեան նշոյլները արդէն երևան եկան և միևնոյն ղարալար թուրքերը այժմ շատ ուրախ են, որ քայքայվելով չեն տեղափոխվել ու վերադարձել։

Թուրք-հայկական արիւնահեղ կռիւների ժամանակ, ուրիշ տեղերի թուրքերը, տեսնելով ղարալարի դրութիւնը, դեռ տխրահռչակ Տակայշվիլու օրով, խնդիրով, մինչև անգամ հեռագրով, ղարալարի լեզուից յայտարարել էին, որ անհրաժեշտ է ղարալար թուրքերին տեղափոխել թուրքական գիւղօրայքը, թէ չէ նրանց կեանքը, իբր թէ, վտանգի մէջ է։ Այդ առիթով շուտափոյթ կօզակներ եկան իրանց մեծերի ու պրիստաւի հետ, որ քոչացնեն ղարալարին, բայց վերջինները չը համաձայնվեցին տեղափոխվել, յայտնելով որ իրանք շատ գոհ են հայերից և բացի այդ խնդիր թէ հեռագիր չեն ուղարկած ում հարկն է իրանց տեղափոխելու համար...

Անցեալ թղթակցութիւններից մէկում գրել էի ի միջի այլոց, որ մեր գաւառի տափարակային մասերում, դաշտավայրերում ապրող թուրքերի շրջաններում թուրք աւազակախումբ է երևան եկել, որը կոտորել է իրան հետամուտ լինող կօզակներից մի քանիսին, որի համար պատժված են և պատժվում են մի քանի մեղադրվող թուրք գիւղեր։ Սակայն յետոյ պարզվեց, որ այդ դէպքերը եղել են ոչ թէ մեր գաւառում, այլ մեր գաւառի սահմանակից՝ Շուշու գաւառում (մեր գաւառի շատ մօտերքում)։

Մեր գաւառի լեռնային տեղերում, գլխաւորապէս՝ Խաչէնի ու Թարթառի ձորակներում, այժմս գետինը ծածկված է ձիւնի հաստ շերտով։ Աղքատ գիւղացու սիրտն է սևացնում այդ սպիտակ հիւրը, դաժան ձմեռը. տունը խոնաւ, փորը սոված, մերկ ու տառապեալ...։ Պէտք է օգնել նրան...։

Օրերս մարդիկ եկան Առաջաձոր, որպէս զի չքաւորներին ցուցակագրեն, նրանց նպաստ տալու համար՝ հացով և սերմով՝ գարնանացանի համար։ Համարեա բոլորը շլինքները ծռած եկել էին հաւաքվել՝ չքաւոր գրվելու և նպաստ ստանալու համար։ Ցուցակագրվեց և Առաջաձորում ապրող ղարալար թուրքերի՝ չքաւոր դասակարգը։

Բ. Զ.

Ց.—Գ. Թղթակցութիւնս վերջացրել էի, երբ լուր եկաւ թէ՝ նորերս կորած վանքցի երիտասարդ Սաղու դիակը գտնվել է «Այգօղլան» անուանեալ տեղը, գտնվելով հեռու Նարեշտար թուրքաբնակ կամ ուղիղն ասած քիւրդաբնակ գիւղից՝ միայն երեք վերստ։ Յայտարարվեց ում հարկն է այդ մասին։ Տեսնենք ինչ տեսակ կը վարվի կառավարութիւնը Նարեշտար գիւղի հետ, համաձայն պատերազմական օրէնքների։ Դիակը այլանդակված էր. տարել էին հանգուցեալի բերդան հրացանը, փամփուշտանոցը՝ լիքը փամփուշտներով, արծաթեայ զօտին, արծաթեայ դաշոյնը ու նոր կարված հագուստը։

Նոյն

ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՔԱՐԱՀՈՒՆՋԻՆ

Գօրիս, յունվարի 2-ին

«Բարի լոյս, հարևան, շնորհաւոր նոր տարի, էսպէս տարի մին էլ ոչ տեսնանք, Աստուած էս նոր տարումն ինի՝ մեզ խղճայ և մեզ համար մի ողորմութեան դուռը պանայ»։ Այս խօսքերով դիմեց ինձ, երէկ առաւօտ, Ստեփան անունով մի քարահունջեցի. նա շատ մրմնջաց և դառն կերպով նկարագրեց գիւղի դրութիւնը։

—Աստուած ողորմած է, Ստեփան ամի,—ասացի ես,—եթէ նոր տարին այնպէս անցնի, ինչպէս մահել է, մեզ համար այնքան էլ վատ չի լինի. այսօր ես քո շնորհաւորման փոխարէն մի նոր բարի լուր կասեմ, և դու կուրախանաս։

—Հօր ա, քեզ մատաղ, շուտ արա ասիր, սիրտս ճաքեց,—ասաց նա։

Նոր տարին իր հետ մեզ նոր ուրախութիւն է բերել. աչքդ լոյս, Ծատուրեանները 1,500 պուդ ցորեն են ուղարկում քարահունջեցիների համար։

—Ճշմարիտ ես ասում. այ շատ շնորհակալ եմ. Աստուած նրանց կեանքը օրհնի. այ, լուս դառնայ Առաքել ապերը,—ասաց գիւղացին և շտապ շտապ քայլեց, գիւղացիներին աւետելու։

Ես անչափ ուրախացայ, երբ նա ժպիտը երեսին հեռացաւ ինձնից։

Այո, նա ուրախացաւ, և գուցէ նրա այդ քաղցր ժպիտը առաջինը լինէր էվակուացիայից յետոյ. նա իսկոյն մոռացաւ իր անցեալը և ներկան։

—Օրհնի հալա բարեկի ումիդ (յոյս) կայ,—եղաւ նրա վերջին խօսքը։

Ա՜խ յոյսեր, յոյսեր. խարար, եթէ այդ յոյսերը չը լինէին, ինչ կը լինէր գիւղացու դրութիւնը։

Վաղուց մեր գիւղացիք մեծ յոյսերով սպասում էին յարգելի Ծատուրեանների այդ նշանաւոր նուիրաբերութեանը, և ահա այսօր նոր տարու հետ նոր բաղդ, նոր օգնութիւն, նոր նուիրաբերութիւն ենք ստանում։

Նուիրաբերութիւն, որը աղքատին ազատում է քաղցից, նուիրաբերութիւն, որը մարդկանց կեանք և ապրելու յոյս է ներշնչում։

Եւ այսպիսի մի խոշոր ու բարոյական ահագին նշանակութիւն ունեցող նպաստի առիթով խորապէս զգացված լինելով, մենք պարտք ենք համարում հրապարակով խորին շնորհակալութիւն յայտնել պ. պ. Ծատուրեաններին, որոնք կեանքի այս ամենադառն րօպէներում չը զլացան օգնութեան ձեռք մեկնելու իրանց մարվող հայրենակիցներին։

Թող այդ բարի, պարտաճանաչութեան վսեմ գաղափարը և անշէջ սէրը դէպի իրանց հայրենակիցները միշտ վառ մնան պարոնայք Ծատուրեանների սրտերում, իսկ քարահունջեցիների պարտքն է արժանաւոր կերպով գնահատել հասարակութեան իսկական բարեկամներին, իր չարն ու բարին կամեցող անձանց։

Այդ նպատակով, այսօր մօտ 30 քարահունջեցիներ գնացին նպաստ ուղարկող պ. պ. Ծատուրեանների հօր, Միրզա Ծատուրեանի, տունը, թէ նոր տարին շնորհաւորելու և թէ նպաստի համար շնորհակալութիւն յայտնելու։

Ցովհաննէս Գրիգորեանց

ԱՆԱՆՈՒՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Վերին-Ղարանլուղ (Նոր-Բայազ. գաւ.)

Մաղինա անուանեալ թուրք գիւղի բնակիչների մէջ բուն է դրել մի անանուն հիւանդութիւն. սկսած նոյեմբերի 1-ից մինչև այսօր այդ ցաւից զոհ են գնացել մօտ 150 հոգի։ Ներկայումս չը կայ տուն, ուր չը լինին 1—2 և 3 անկողնում պառկած հիւանդներ, չը կայ և մէկ տուն, որ զոհ տուած չը լինի նոյնպէս 1, 2 և 3 հոգի։

Այդ գիւղը բաղկանում է 46 տնից. բնակիչները թուրքեր են. գիւղը գտնվում է Վերին-Ղարանլուղ, Վերին-Ադիեաման, Քարվանսարա և Աթղաշ գիւղերի մէջ տեղը (յիշեալ երկու գիւղերը հայկական են և միւս երկուսը քուրդ-թուրքական)։ Վարակված Մաղինա գիւղը յիշեալ 4 գիւղերից 3 վերստ հեռաւորութիւն ունի։

Մաղինացիք ամեն օր երթևեկութիւն ունեն վերև ասված գիւղերի հետ։ Բժշկական խորհուրդներից շատ հեռու են. ցաւի անունը կնքված է. ոմանք անուանում են «холера» (ասիական հնդախտ), ոմանք ասում են «հարինք» է (сыпной тифъ)։ Այդ անկոչ, անանուն հիւանդութեան մասին, ինչպէս պատմում են, չէ յայտնված կառավարութեան. չը յայտնելու պատճառն է վախի կասկածը, թէ բժիշկ կը գայ, հիւանդի և մեռածի դիակները կայրէ, կամ թէ դանակի կենթարկէ, որ խիստ ատում են։

Անձամբ գնացի Մաղինա գիւղը և Մուրսալի անունով թուրքից հարցրի հիւանդութեան ել և մուտը. նա պատմեց հետևեալը (նրա հայրն էլ մեռել էր այս ցաւով). Նախքան հիւանդանալը սկսում են դողալ, խիստ լուծել, գլխի պտոյտ են ունենում և ուժասպառվում են. քանի գնում՝ լուծողութիւնը սաստիկ աւելանում է. հիւանդը իր բնական տեսքը կորցնում է, ախորժակը բոլորովին անհետանում է, ծարաւը սաստիկ տանջում է, որքան էլ ձիւնով ջուր է ընդունում՝ լեզուն այնքան չորանում է և փառ է բռնում. փորը ներս է ընկնում և երակները թոյլ փախում է սկսվում. ձեռքերը և ոտները սառած, շրթունքները կապտած, աչքերը փոս ընկած. ուտելու և խօսելու ախորժակի բացակայութիւն։ Սրան չը հաւատալով, անձամբ գնացի հիւանդի մօտ, որի անունն էր Իբրահիմլի, որը աւելացրեց ականջների խշշոցը, փորկապութիւն, մէջքի և ձեռքերի կծկվելը, մարմնի թուլութիւն և քրտնքի շատութիւն. և այս տեսակ ցաւը բժշկի բացակայութեան պատճառով անանուն է մնացել և բժշկական խորհուրդներից հեռու։ Շատ ուրախալի կը լինի, որ յիշեալ ցաւը շուտով արմատախիլ անվի, որպէս զի չը վարակէ և շրջակայ գիւղերի բնակիչներին։

Ճանապարհորդ Միքայէլ Թասիեան

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Թիֆլիսի նահանգապետը նշանակել է Պետական Դումայի ընտրութիւնների հետևեալ ժամանակամիջոցները. Թիֆլիսի, Թիօնէթի, Թելաւի, Սղնախի, Դուշէթի, Գորու, Ախալցխայի, Ախալքալաքի գաւառների շինական թաղական ժողովներում լիազօրների ընտրութիւնները՝ սոյն յունվար ամսի 12-ին, իսկ Բօրչալուի գաւառում՝ մինչև յունվարի 15-ը. նահանգի բոլոր գաւառներում շինական թաղային ժողովների կողմից ընտրվող լիազօրների համագումարները՝ յունվարի 22-ին. Ախալքալաքի, Ախալցխայի, Գորու, Թելաւի և Թիօնէթի գաւառներում մանր հողատէրերի նախնական համագումարները՝ յունվարի 13 ին, Բօրչալուի գաւառում՝ յունվարի 13-ին և 17-ին, Դուշէթի գաւառում՝ յունվարի 13 ին և 15-ին, Սղնախի գաւառում՝ յունվարի 13, 15, 17, և 19-ին, և Թիֆլիսի գաւառում յունվարի 13, 15 և 17-ին. նահանգի բոլոր գաւառներում հողատէրերի համագումարները՝ յունվարի 27-ին. Թիֆլիսի գաւառի քաղաքային ընտրողների համագումարները՝ յունվարի 21-ին, Ախալքալաքի, Ախալցխայի, Գորու, Դուշէթի, Սղնախի և Թելաւի գաւառներում՝ յունվարի 28-ին, իսկ Բօրչալուի և Թիօնէթի գաւառների քաղաքային ընտրողների համագումարները միացված են այդ գաւառների հողատէրերի համագումարներին, որոնք նշանակված են յունվարի 27-ին. Բօրչալուի և Գորու գաւառներում և Թիֆլիս քաղաքում բանւորների լիազօրների ընտրութիւնները յունվարի 20-ին. Թիֆլիս քաղաքի կողմից բանւորների լիազօրների համագումարը՝ յունվարի 25-ին, իսկ Բօրչալուի և Գորու գաւառների կողմից լիազօրների ընտրութիւնները՝ յունվարի 26 ին և Թիֆլիս քաղաքի պատուիրակների ընտրութիւնը՝ յունվարի 28-ին։

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Գեներալ Պաւլովի սպանութեան օրը Ցարսկոյէ-Սելոյում խորհրդակցութիւն է կայացել։ Այդ սպանութիւնը սարսափելի տպաւորութիւն է թողնել բարձր շրջաններում։ Պրեմիէրի հաւաստիացումների համար՝ թէ երկիրը խաղաղվել է արդէն, յարձակումները սաստկացան այն աստիճանին, որ մի բարձրաստիճան անձնաւորութիւն նկատել էր Ստոլիպինին. «Դուք մեզ էիք հանգստացնում և ոչ թէ երկիրը»։ Այդ յանդիմանութեանը Ստոլիպինը պատասխանել է, որ տերրորիստական գործողութիւնները ապացոյց են, որ երկիրը խաղաղվել է։ Ստոլիպինի կարծիքով, տերրորը համեմատաբար թուլանում է, երբ երկիրը յուզվում է, և աւելանում է, երբ երկիրը խաղաղվում է։ Յայտնված երկիւղի առիթով, թէ տերրորները կարող են վատ ազդեցութիւն գործել կառավարչական բարձր շրջանների վրա, պրեմիէրը պատասխանել է, որ ոչ ինքը և ոչ էլ հայրենիքին նուիրված կառավարչական անձնաւորութիւններից շատերը չեն վախենալ տերրորիստներից և առանց ընկճվելու կը գործեն խիստ թելադրութեամբ։ Բայց և այնպէս կասկածանքով են վերաբերվել պրեմիէրի յայտնած կարծիքին։ Այդ խորհրդի ժամանակ, ինչպէս ասում են, շատ անախորժ կարծիքներ են յայտնվել։ Խորհրդի ժամանակ խօսակցութիւն է եղել միջոցների ձեռնարկելու մասին, և այդ խօսակցութիւնը ունեցել է հաշտեցնող բնաւորութիւն։ Վիճաբանութիւնը մեծ մասամբ պտտել է ապագայ Դումայի շուրջը։ Ստոլիպինի հաւաստիացումները այլևս կորցրել են իրանց արժէքը։ Զգուշաւոր Դումա կազմելու համար նրա ձեռք առած միջոցները ոչ միայն հաւանութիւն չեն գտել, այլ և ղեկավարող շրջաններին այն կարծիքին են հասցրել, որ այդ խիստ միջոցները հազիւ թէ կարողանան իրանց նպատակին հասնել և դադարեցնել տերրորները. ընդհակառակը թւում է, որ հէնց դրանք են տերրորների շատանալու շարժառիթը։ Ի միջի այլոց, խիստ կրիտիկայի են ենթարկել մինիստրական յարաբերութիւնը ռուս ժողովրդի միութեան հետ։ Մինչև անգամ ռուս ժողովրդի միութեան մշտական բարեկամները ցոյց են տալիս, որ միութեան յարաբերութիւնների տակտիկայի մէջ խոշոր սխալմունքներ են մտել, և որ ակներև պաշտպանութիւնը, համակրական վերաբերմունքը դէպի միութիւնը կառավարութեանը վարկաբեկ արեց։ Դուման ևս առաւել նշանակութիւն է ձեռք բերում նոյն իսկ ռէակցիոն տրամադրված բարձր պաշտօնեաների աչքում, և Դումայի երկրորդ անգամ արձակելու հարցը հազիւ թէ այնքան թեթև ըմբռնման հանդիպի, ինչպէս այդ եղաւ խորհրդակցական նախորդ նիստերի ժամանակ, երբ խիստ և վճռական կերպով գործելու տրամադրութիւնը զօրեղ էր։ Ռեպրեսալիաների առիթով, ինչպէս հաղորդում են, Պոբեդոնոսցեվը նամակ է գրել, որտեղ վճռականապէս ասված է չը դադարեցնել զինւորական դաշտային դատարանները և բացառիկ դրութիւնները ներկայումս, որովհետև այդ կը նշանակէ անձնատուր լինել տերրորներին։ Պոբեդոնոսցեվի այդ կարծիքը աւելի ևս նպաստել է անորոշութեան։ Այդ պատճառով որոշել են նոր խորհրդակցութիւն կազմել յայտնի բիւրոկրատներից բաղկացած, որտեղ կը լինեն Ն. Պ. Իգնատիեվ, Հերարդ, Տագանցեվ, Երմօլով և ուրիշները։ Որ Ստոլիպինի դրութիւնը վերջնականապէս խախտված է, դա կասկածից դուրս է համարվում։

(«Вѣкъ»)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Новь» լրագրի մէջ իշ. Պ. Դ. Դոլգորուկովը հաղորդում է ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտէին կից կազմված մասնաժողովի մշակած կանոնները եկեղեցական հարցի վերաբերմամբ։ Այդ մասնաժողովի կազմի մէջ մտել են պրոֆ. Նովգորոդցեվ, պրոֆ. Կլիւչևսկի, իշ. Պ. Դ. Դոլգորուկով, պրիվատ-դոցենտ Կոտլեարևսկի, պրոֆ. Բուլգակով և մի քանի ուրիշ քահանաներ։

Կանոնները հետևեալներն են.

1) Ուղղափառ ռուսաց եկեղեցուն է պատկանում ինքնավարութեան ազատ իրաւունքը, ճշմարիտ եկեղեցական սկզբունքներով, ծխականների մասնակցութեամբ և եկեղեցական ուսմունքի համաձայն։ Այն բոլոր օրէնսդրութիւնները, որոնք եկեղեցու բարձր կառավարութիւնը ստորադրում են պետական կառավարչական մարմնին, վերացվում են։

2) Օբեր-պրոկուրօրի պարտականութիւնները սահմանափակվում են միայն լոկ հսկողութեամբ, որպէսզի եկեղեցու և պետութեան միջև յարաբերութիւնները լինեն օրինական. նոյնպէս և նա ներկայանում է իբրև եկեղեցու կարիքների արտայայտիչ պետութեան առջև։ Օբեր-պրոկուրօրի ակտիվ միջամտութիւնը եկեղեցու գործերի և պաշտօնեաների կազմի որոշման ու կառավարութեան մէջ այսուհետև վերանում է։

3) Եկեղեցական-ծխական համայնքին վերապահվում են իրաւաբանական անձի իրաւունքներ (սեփականութիւն ձեռք բերելու, ժողովներ գումարելու և եկեղեցական պաշտօնեաների ընտրութեանը մասնակցելու)։

4) Վերացվում է հոգևորականութեան կաստայական առանձնացումը ազատ մուտք բանալով հոգևոր դպրոցներ մտնելու և եկեղեցական պաշտօններ ստանձնելու համար։

5) Հոգևորականութեան վրայից վերցվում է քաղաքացիական զանազան ակտեր կատարելու (ծննդեան, պսակի, զինւորակոչութեան, ստատիստիքական և այլ տեսակ վկայականներ) և եկեղեցական ամբիոնից մանիֆեստներ, ուկազներ և ուրիշ տեսակ զուտ պետական, նոյնպէս և ոստիկանական բնաւորութիւն ունեցող կարգադրութիւններ անելու պարտականութիւնը։

6) Եկեղեցու ստացուածքի իրաւունքը և պետական բիւջէում որոշ գումար յատկացնելը եկեղեցու ծխերի և դպրոցների կարիքների համար ընդունվում է ապագայում ևս, մինչև որ աւելի ճիշտ կերպով կորոշվեն եկեղեցու և պետութեան փոխադարձ յարաբերութիւնները իրար հետ։

Այդ կէտերը վերաբերում են միայն պետութեան յարաբերութեանը դէպի ուղղափառ եկեղեցին, իսկ այլադաւանների համար մասնաժողովը կը զբաղվի յետոյ։ Մշակված կէտերը պէտք է ծառայեն իբրև նիւթ եկեղեցական հարցի լուծման համար կենտրոնական կոմիտէի Մոսկվայի բաժանմունքում և կենտրոնական կոմիտէի հաւանութիւնից յետոյ կառաջարկվի կուսակցութեան հինգերորդ համագումարին կուսակցութեան ծրագրի մէջ մտցնելու համար։

Մասնաժողովը այդ կէտերը մշակելիս ղեկավարվել է այն մտքով, որ անհրաժեշտ է եկեղեցուն իրան լայն հնարաւորութիւն տալ ներքին ինքնորոշման և ինքնավարութեան համար, իսկ պետութիւնը պէտք է աջակցէ եկեղեցական ժողովների կանոնաւոր գումարմանը և հսկէ եկեղեցական գործերի վրա այնքան, որքան որ եկեղեցական կառավարութիւնը շօշափում է պետական բիւջէն և, առհասարակ, որքան որ եկեղեցին շօշափում է ընդհանուր պետութեան շահերը։

Մասնաժողովը մշակելով նոր կարգեր եկեղեցու կառավարութեան մերձաւոր ապագայի համար, հնարաւոր չէ համարում միանգամից հերթական դարձնել եկեղեցու անջատումը պետութիւնից, որովհետև պետութեան բազմամեայ խնամակալութեան շնորհիւ պետութեան և եկեղեցու յարաբերութիւնները իրար հետ սերտ կերպով շաղկապված են, նաև հարցի լրջութեան պատճառով, թէև սկզբունքով ընդունում է այդ և գտնում է, որ պէտք է ձգտել թէ պետութեան և թէ ժամանակին եկեղեցու շահից դրդված։

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Լազարեան ճեմարանի դիրեկտոր պրոֆեսոր Վ. Միլլերը, ինչպէս տեղեկացել է «Р. В.» լրագիրը, հրաժարական է տուել իր պաշտօնից։ Պատճառը համարում են նրա համար այն անարդար ու վիրաւորական նկատողութիւնը, որ գործ էր ածել պաշտօնական գրութեան մէջ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական Գերասիմովը Լազարեան ճեմարանի տնտեսական և ուսումնական գործի վերաբերմամբ։ Միլլերի հրաժարականի լուրը մեծ աղմուկ է առաջացրել Լազարեան ճեմարանի ուսուցիչների մէջ, որոնք ընտելացել են գնահատել իրանց յարգելի դիրեկտորի գործունէութիւնը և յարգանքով են վերաբերվել նրա անձնաւորութեանը, իբրև յայտնի գիտնականի ու պրօֆեսորի։ Այդ գաղտնի ինչ-որ մութ զրպարտութիւններից բացի նրանց մտահոգութիւն է պատճառում և այն միտքը, թէ ով է նշանակվելու Միլլերի փոխարէն ճեմարանի դիրեկտոր։ Ինչպէս յայտնի է, ճեմարանը բաղկացած է գիմնազիայից և արևելեան լեզուների բարձրագոյն մասնագիտական դասընթացքներից և իր սաների թւում ունի շատ հայեր և կովկասեան ուրիշ ազգեր. այդ պատճառով այդ ընդարձակ բարձրագոյն դպրոցի դիրեկտորից պահանջվում են ոչ միայն շատ աշխատանքներ, այլ և շատ հոգսեր, մասնագիտական գիտելիքներ և մանկավարժական տակտիկա։ («Р. В.»)։

—Արժանահաւատ աղբիւրներից «Слово» լրագրին հաղորդում են, որ բարձրագոյն դպրոցները այս տարի Ռուսաստանում բանալու հարցը վճռված է դրական մտքով։ Այդ հարցը ի միջի այլոց քննութեան է ենթարկվել բարձրագոյն դպրոցների ռեկտորների և դիրեկտորների մօտ ժամանակներս ժողովրդական լուսաւորութեան մինիստր ֆօն Կաուֆմանի նախագահութեամբ ունեցած նիստում։ Խորհրդակցութիւնը եկել է այն եզրակացութեան, որ թէև միանգամայն հնարաւոր է թւում առաջիկայ նախընտրական ժողովների ժամանակ դպրոցների ակադեմիական կեանքի ուղիղ ընթացքի խախտումը և արդարացի այն երկիւղը, որ ուսանողութիւնը չի վերաբերվիլ արժանավայել զգուշութեամբ ժողովների իրաւունքին և այդպիսով բարդութիւններ կը ստեղծէ ակադեմիական կեանքի մէջ, այնուամենայնիւ այդ երկիւղը չէ կարող հիմք ծառայել փակելու բարձրագոյն դպրոցները նախընտրական պայքարի ժամանակամիջոցում այն պատճառով, որ բարձրագոյն դպրոցների պրոֆեսորների խորհուրդը իրան վերապահված ինքնավար իրաւունքների զօրութեամբ միշտ էլ կարող է սպառնացող բարդութիւնների առաջն առնել, իսկ այն դէպքում, եթէ հնարաւորութիւն չի ունենալ նրանց առաջն առնելու, ինքը կարող է դիմել ամենածայրայեղ միջոցին, այսինքն դպրոցը փակել։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Պետական Դումայի անդամների ընտրութեան օրը նշանակելու հարցը նորից է սկըսում քննութեան նիւթ դառնալ կառավարչական շրջաններում։ Ինչպէս նկատվում է, այնտեղ երկիւղ են կրում, որ մի գուցէ մի քանի տեղերում յաղթող հանդիսանան ձախակողմեան կուսակցութիւնները և այդ հանգամանքը կարող է քայքայումն առաջ բերել ուրիշ տեղերի աջակողմեան կուսակցութիւնների մէջ, ուր մտադրութիւն կար ընտրութիւնները յետաձգել աւելի ուշ։ Այդ պատճառով մինիստրների խորհուրդը, ինչպէս տեղեկացել է «Р. В.» լրագիրը, վճռել է Պետական Դումայի անդամների ընտրութիւնները նշանակել ամբողջ Ռուսաստանում միաժամանակ մի օրում։ Այդ որոշումը ազդեցութիւն կունենայ և Պետերբուրգի ընտրութիւնների ժամանակամիջոցի վրա, ուր առաջ մտադրութիւն կար նշանակել փետրվարի 16—17-ը։ Պետերբուրգի և միւս մեծ քաղաքների ընտրութիւնները կախված կը լինեն ամբողջ Ռուսաստանի ընտրողական պայքարի ընթացքից։

—Մ. Մ. Ստասիւլևիչը համաձայնութիւն է տուել խաղաղ վերածնութեան կուսակցութեանը իր թեկնածութիւնը դնելու Պետական Դումայի անդամութեան համար։

(«Нов. Вр.»)

—Շնորհիւ ընտրողական մասնաժողովի արդիւնաբերական վկայականների օրէնքի վերաբերմամբ տուած մեկնութեան, ժողովրդական ազատութեան կուսակցութեան առաջնակարգ լիդերներից մէկը՝ Պ. Ն. Միլիւկովը կորցնում է իր ընտրողական իրաւունքը Պետերբուրգում, որովհետև նա չէր կարող ամբողջ տարվայ համար վկայական ներկայացնել։

—Խաղաղ վերածնութեան կուսակցութիւնը վերջնականապէս մշակել է իր թեկնածուների ցուցակները Պետական Դումայի համար Պետերբուրգից։ Այդ ցուցակների մէջ մտել են ակադեմիկ Արսենիէվ, հրապարակախօս Ստասիւլևիչ, երդուեալ-հաւատարմատար Գօզլևսկի, Գանձակի նախկին նահանգապետ գեներալ Տակայշվիլի և քահանաներ, Ագեէվ և Գ. Պետրով։ Այդ ցուցակը պէտք է ենթարկվի պլեբիսցիտի, որոնք կարող են փոխել նրան։

(«Б. В.»)

ԹՈՒՐՔ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Բագուի թուրք նպաստամատոյց յանձնաժողովի նախագահ Զէյնալ Աբդին Թաղիևը ստացել է հետևեալ նամակը, Իսա-բէկ Աշուրբէգօվից՝ նպաստամատոյցի պատուիրակից։

Այսօր երկու օր է, որ հասել ենք Ջիբրայլի գիւղը, որը Ջիբրայլի գաւառի երրորդ գաւառամասումն է գտնվում։

Այս երրորդ գաւառամասում հայ-թուրքական ընդհարումներից միայն մի-երկու գիւղ են վնասված, բայց մնացեալ մասերում մօրեխը միանգամայն փչացրել է բոլոր հացը։

Երրորդ գաւառամասը ունի երեք հազար ազգաբնակութիւնից աւելի բնակիչ. կէսը սիւննի դաւանանքից, իսկ միւս կէսն էլ շիա դաւանութիւնից։ Կարիքը անչափ աստիճանով է։

Աստուած վկայ, հաջի, ցանված սերմից մի հատիկ ձեռք չէ գցվել։ Այսօր երրորդ գաւառամասի բնակչութիւնը հաւաքեցինք մեզ մօտ, որպէսզի նա ներկայացուցիչներ ընտրէ և իր դրութիւնը մեզ պարզէ։

Մեր տեսած բազմաթիւ գիւղերում, Զանգեզուրի գաւառամասում, կարիքը հետզհետէ սուր բնաւորութիւն է ստանում։

Մեր գալու մասին լուր ստանալով՝ Զանգեզուրից քաղցածներ, մերկեր մեր առաջը կտրեցին։ Յարգելի հաջի, մեր սիրտը չի դիմանում. ցանկալի ու անհրաժեշտ է, որ մեր կօմիտէտն ու ժողովուրդը իր ջանքերը կրկնապատկէ և նպաստի քանակն աւելացնէ։ Այն դրութեան չը պէտք է հասնել, որ մեր վրա յոյս դրած մեր եղբայրները յուսախաբ լինեն, և մենք նրանց մօտ ամօթով մնանք։

Ուղարկեցէք մեր նախապէս խնդրած հին հագուստեղէններն ու պահանջած փողը Զանգեզուր, որպէսզի բաժանենք Զանգեզուրի միանգամայն աւերված գիւղերի ժողովրդին, մեր կողմից ներկայացուցիչներ կարգենք և մենք վերադառնանք Բագու։

Նախ մենք մտածում էինք հացահատիկ գնել Պարսկաստանից, բայց պարսկաստանցի անամօթ ու անգութ խանները մտածում են հացը թանգացնել։

Յամենայն դէպս եթէ մեզ հասնի Թալիշից երեսուն ուղտաբեռ ցորեն և կամ ալիւր, ցորենը այստեղ թէ էժան և թէ առատ կը լինի։ Եւ այդ նրա համար, որ երբ պարսկաստանցի խանները կը լսեն, թէ Զանգեզուր ցորեն է գնացել Բագուի կողմերից և հետևաբար ցորենի գինը ընկնում է, նրանք կաշխատեն իրանց ցորենը շուտով վաճառել և այդպիսով ցորենի թէ առատութիւն և թէ էժանութիւն կը լինի։ Մեր այս կողմերը գալը այն ազդեցութիւնն է ունեցել, որ ամեն տեղ ցորենի գինն ընկել է։ Միայն անհրաժեշտ է, որ այստեղ Թալիշից ուղղակի ցորեն գայ... Հարկաւոր է, որ ցորենի վրա հսկող մեր առանձին մարդիկն ունենանք։ Եթէ Զանգեզուր ուղարկվող մարդիկը քիչ են, պէտք է անպատճառ Թարթառի, Բերդայի, Աղդամի և Կարա-Բուլաղի շրջանները մարդիկ գնան։ Հարկաւոր է, որ այդ շրջաններում ունենանք մեր սեպհական մարդկանց... Եղանակները լաւ են գնում. թող չը վախենան։ Նորից կրկնում ենք, որ պէտք է որքան կարելի է շուտով ուղարկել հագուստեղէն և փող։

Իսա-բէգ Աշուրբէգօվ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Նոր-տարվայ հանդէսը ուսումնարանում

Ամսիս 1-ի երեկոյեան տեղիս ուսումնարանում պատրաստված էր տօնածառ աշակերտների համար։ Թէ տօնածառի զարդերը և թէ 140-ի չափ աշակերտներին բաժանելու համար գնված մրգերի ծախքերը հոգացել էր տեղս բնակվող գանձակեցի պ. Աստուածբէգ Զաքարեանը։

Առիթից օգտվելով մեր մասի գործակալ Զաքարիա քահ. Ապրեսեանը, որ դպրոցի աւագ ուսուցիչն է ներկայումս, տօնածառին միացրել էր և գրականական երեկոյթ, որի ժամանակ երեխայքը շատ գեղեցիկ առոգանութեամբ և շարժուածքների բնական ձևերով արտասանեցին հայերէն և ռուսերէն ոտանաւորներ։ Մէջ ընդ մէջ երգում էր 40 հոգուց բաղկացած երգեցիկ խումբը՝ ղեկավարութեամբ հայր Ապրեսեանի։

Ապրեսեան քահանան բանալով հանդէսը մի քանի խօսքով բացատրեց տօների նշանակութիւնը և մանաւորապէս նոր տարին։ Ռուսերէն ոտանաւորների արտասանութիւնից առաջ բացատրեց պետական լեզուի կարևորութիւնը և ապա երկար կանգ առնելով Քարվանսարայի դպրոցի 40-ամեայ գործունէութեան վրա՝ համեմատեց այն եւրոպացոց 40-ամեայ դպրոցների հետ։ Բացատրելով ուսման անհրաժեշտութիւնը, պարտադիր ու ձրի ուսումը, օրինակ բերեց Շուլավէրը և հանդիսականներին յորդորեց օրինակ վերցնել նրանցից։

Հանդէսը մի օգտաւէտ գործով յաւերժացնելու համար հ. Ապրեսեանը բացատրեց գրադարան-ընթերցարանի նշանակութիւնը և այդ երեկոյ հիմք դրեց հայկական գրադարանի, որին սիրով մասնակցել խոստացան հանդիսականները և հէնց այդ երեկոյթի 10-ական կօպէկ մուտքի վճարները յատկացրին այդ նպատակին։ Անդամավճարների ցուցակը յանձնվեց հոգաբարձութեան։ Փակագծի մէջ ասենք, որ դպրոցը ունի ռուսաց գրքերի գրադարան և ոչ մի հայերէն գիրք։

Երեկոյթը վերջանալուց յետոյ աշակերտուհի օր. Մարիամ Տէր-Եղիազարեանցը իր ընկերների կողմից կարճ, բայց շատ սիրուն ճառով շնորհակալութիւն յայտնեց պ. Աստուածբէգին, որ իրանց համար այնքան սիրուն տօնածառ հոգս էր քաշել։

Ամենից վերջը երկրորդ ուսուցիչ և տեղիս ծխատէր Մեսրոպ քահ. Եղիկեանցը մի առ մի կանգ առնելով երեկոյթի առանձին կէտերի վրա յայտնեց իր շնորհակալութիւնը հ. Ապրեսեանին և պ. Աստուածբէգին, որոնց ջանքերով հանդէսը կազմակերպված էր լաւ և շատ քաղցր տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա։

Աշակերտների համար այս տարի կը ստացվի «Հասկեր» և «Աղբիւր»։

Մ.

Քարվանսարա, 3 յունվարի

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ոչինչ այնքան ծիծաղելի ու սխալ չէ, քան այն, որ ամեն ժամանակ սօցիալ-դեմօկրատիայի հասցէին յանդիմանութիւններ են արվում, թէ նա անկարող է որևէ մի դրական գործ կատարել օրէնսդրութեան մէջ, որ նա գիտէ միայն միշտ ամեն ինչ բացասել։ Եթէ պարլամենտներում սօցիալ-դեմօկրատիան բաւականանում է գլխաւորաբար միմիայն քննադատութիւն անելով, այդ ոչ թէ նրանից է, որ նա չէր կարողանայ մի որևէ դրական բան առաջարկել, այլ պարզապէս նրանից է, որ նա դեռ փոքրամասնութիւն է կազմում. Իսկ փոքրամասնութեան գործը բոլոր պարլամենտական երկրներում էլ, ոչ թէ օրէնսդրութեան մէջ ակտիւ մասնակցութիւն ունենալն է, այլ այդ գործունէութեան քննադատութիւնն է։ Թէ մենք կարող ենք առաջարկութիւններ անել, դրան ապացոյց մեր ծրագիրն է։ Բայց առայժմ սօցիալ-դեմօկրատիան իրանից փոքրամասնութիւն է ներկայացնում, նա հազուագիւտ դէպքերում կարող է իրապէս հնարաւորութիւն գտնել իր այս կամ այն առաջարկը օրէնքի վերածելու համար։

Սակայն, օրէնսդրական նախագծերը քննադատելու աշխատանքը միմիայն ներկայացված նախագծերը բացասելու մէջ չէ կայանում։ Օրէնսդրական նախագիծը քննադատել, այդ, ըստ մեծի մասին, նշանակում է՝ աշխատել նրան աւելի լաւ դարձնել։ Այդ աշխատանքի մէջ մասնակցում է ամբողջ պարլամենտը, ոչ միայն մեծամասնութիւնը, այլ և փոքրամասնութիւնը, ոչ միայն նրանք, որոնք կողմնակից են օրէնքի սկզբունքին, այլ և նրանք, որոնք մերժում են նրան։ Օրէնքի վերջնական ձևակերպութիւնից է կախված և նրա ունենալիք ազդեցութիւնը. հէնց այդ ազդեցութիւնը թուլացնելու մէջ է կայանում նրանց գլխաւոր գործը, որոնք համոզված են այդ օրէնքի վնասակար լինելու մէջ։

Որչափ էլ մեծ նշանակութիւն ունենան օրէնսդրական նախագծեր պատրաստելու նախնական աշխատութիւնները, այնուամենայնիւ յաճախ էլ աւելի մեծ աշխատանք է պահանջում նրա քննութիւնը պարլամենտում, ֆրակցիաների ու կոմիսիաների ժողովներում, և նորից ամբողջ պարլամենտական կազմի առաջ քննելիս։ Եթէ խօսքը մի շատ կարևոր օրէնքի մասին է լինում, այնպիսի օրէնքի, որը չափազանց կարևոր շահեր է շօշափում, այն ժամանակ նրա քննութիւնը սովորաբար անվերջ վիճաբանութիւններ էր առաջացնում, և անհամար ուղղումներ են արվում առաջարկված օրէնքի մէջ։ Ո՞վ կարող է հերքել, որ այդպիսի դէպքերում ահագին ժամանակ է կորչում ի զուր տեղը, և մարդիկ ի զուր ժամավաճառ են լինում։ Բայց մեզ ցանկալի է կարծել, որ այդ ոչ միմիայն պարլամենտարիզմի, այլ և ընդհանրապէս բոլոր ազատ ժողովների առանձնայատկութիւնն է, կամ, եթէ կուզէք, պակասութիւնն է։ Եթէ այդ բանը կարողանար պարլամենտարիզմի դէմ մի արգումենտ ծառայել, այն ժամանակ դա մի արգումենտ պիտի լինէր և ժողովներ գումարելու իրաւունքի և մամուլի ազատութեան դէմ։ Այդ չարիքը չէր կարող նուազել և այն դէպքում, եթէ տասը հազար պարլամենտներ գումարէին հազարական անդամներով, ինչպիսին Ռիտտինգաուզէնն է առաջարկում, մի հատիկ պարլամենտի փոխարէն։

Որչափ էլ պարլամենտական քննութիւնը քիչ գնահատուի, այնուամենայնիւ, եթէ չեն ցանկանում, որ օրէնքներ կազմելը մի խումբ մարդկանց մօնօպօլ իրաւունքը լինի, ներկայ հասարակական յարաբերութիւնների օրով նա միակ միջոցն է օրէնսդրական նախագծերը բարելաւելու համար, այսինքն՝ անհրաժեշտ է, որ պետական գործերի մէջ մասնակցութիւն ունենան զանազան կամ բոլոր կարևոր հասարակական խմբերն ու կուսակցութիւնները։ Այդ նպատակին հասնելու համար մինչև օրս, գոնէ մի ուրիշ, աւելի լաւ միջոց գտնուած չէ։

Օրէնքի մշակումը, օրինագծի բարելաւումը անկարող են տեղի ունենալ Րիտտինգաուզէնի առաջարկած ժողովրդային անմիջական օրէնսդրական միջոցով։ Եւ շվէյցարական նախաձեռնութիւնը հէնց այն պակասութիւնը ունի, որ նա թոյլ չէ տալիս օրէնքի նախագծերի մէջ ուղղումներ մտցնել։ Դա նամանաւանդ շատ զգալի է լինում, երբ օրինագծերը առաջարկվում են հէնց ժողովրդի միջից։ Այդպիսի օրինագծերը պէտք է ընդունվեն կամ մերժվեն հէնց այն ձևով, ինչ ձևով որ նրանք առաջարկվում են։

Եթէ օրինագիծ առաջարկողը չը կարողացաւ հէնց առաջին անգամից նրա բովանդակութիւնը, իր բոլոր կէտերով, լաւ և ճիշտ ձևակերպութեան մէջ դնել, այն ժամանակ օրինագիծը կամ մերժվում է նոյն իսկ նրա մէջ շօշափված խնդիրների համար սրտացաւ կողմնակիցների կողմից և կամ նա ընդունվում է, բայց իր նպատակին չի հասնում։ Նախաձեռնութեան այն ձևը, որը, ներկայացուցչական սկզբունքը մերժելու տեսակէտով, ամենից մօտ է Րիտտինգաուզէնի առաջարկութեանը և որը նրանից տարբերվում է այն կարևոր կէտի մէջ, որ Րիտտինգաուզէնը ժողովրդային կամքի սահմանափակումն է համարում նոյն իսկ ձևակերպված օրինագիծ առաջարկելը,—հէնց այդ ձևն, ասում ենք, ամենից քիչ գործադրելի հանդիսացաւ կեանքի մէջ։ Մի քանի կանտօններ միայն նախաձեռնութեան այդ ձևը մտցրին իրանց մէջ, և մենք դեռ չենք լսել, թէ նա մի առանձին նշանակութիւն է ստացել։ Կանտօնների մեծ մասը, ինչպէս և ամբողջ շվէյցարական միութիւնը, նախաձեռնութեան այն ձևը միայն գիտեն, որը հնարաւորութիւն է տալիս ժողովրդին՝ իրանց ներկայացուցիչներին տեղեկացնելու, թէ այս ինչ օրէնքի մշակման կարիք է զգացվում։ Նրանք այդպիսով խոստովանում են, որ նպատակայարմար օրէնքները սովորաբար չեն կարող մասնաւոր մարդկանց գործ լինել, որ այդ կարևոր ֆունկցիան պէտք է յանձնել ներկայացուցիչների ժողովին։

Օրէնքների գործադրութիւնը

IX

Որչափ կարևոր է, որ օրէնքը խնամքով ձևակերպված ու խմբագրված լինի, այնուամենայնիւ ամենալաւ օրէնքն էլ ոչ մի գրօշ չարժէ, եթէ նա միայն թղթի վրա է մնում, կամ թէ չէ՝ գործադրվում է սրա կամ նրա քմահաճոյքով։ Այդ պատճառով էլ օրէնսդրական ժողովների ամենակարևոր գործերից մէկն էլ այն պիտի լինի, որ նրանք հսկեն օրէնքների գործադրութեան վրա։

Օրէնքներին պարտաւոր են հնազանդվել ոչ միայն քաղաքացիները, այլ և պետական իշխանութիւնը, որի կամայականութիւնն էլ է սահմանափակվում օրէնքներով։ Օրէնքի պահապանները յաճախ նոյնչափ թամահ են անում ոչ-օրինական ճանապարհների դիմել, որչափ և «կաշկանդված դասակարգերը», այսինքն՝ ժողովրդի այն բոլոր տարրերը, որոնց վարքն ու գործողութիւնները, ձգտումներն ու հակումները մասնաւորապէս սահմանափակվում են օրէնքներով։ Իշխանութիւնների ոչ-օրինական ճանապարհներով օգտվելու թամահը այնչափ աւելի խիստ է լինում որչափ որ աւելի քիչ է լինում նրանց վրայի կօնտրօլը և որչափ որ աւելի մեծ է նրանց ոյժը։ Այդ պատճառով էլ աբսօլիւտիզմը ժամանակակից պետութեան մէջ շատ աւելի անտանելի է, քան, օրինակի համար, մի որևէ արևելեան բռնապետութեան մէջ։ Այնտեղ ինքնակալ կառավարութիւնը հանդիսանում է այնպիսի հասարակութեան վերին կառուցուածքը, որը, չը հաշվելով քաղաքային աննշան բնակչութիւնը, կազմված է բացառապէս գիւղական՝ տնտեսապէս ինքնուրոյն և միմեանց հետ ոչ մի օրգանական կապով չը կապված՝ համայնքներից։

Դեմօկրատիան ձգտում է կարելի եղածին չափ սահմանափակել բիւրօկրատական ռեժիմը, հնարաւոր եղածին չափ նորից համայնքների և միութիւնների ինքնագործունէութեանը վերադարձնել այն ֆունկցիաներից շատերը, որոնք այժմ կենտրոնացած են չինօվնիկների ձեռքում։ Բայց այդ ձգտումը սահմաններ ունի։ Թէ արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակը և թէ կապիտալիստական պետութիւնը շարունակ աւելի ու աւելի կենտրոնացման են ձգտում, իսկ հասարակութեան կողմից պետութեան կարգադրութեան յանձնված գործերը թէ աւելի ու աւելի բազմաթիւ են դառնում և թէ բարդանում են։ Այդ պատճառով դեմօկրատական պետութիւնների մէջ էլ շարունակ բազմանում են թէ կառավարչական չինօվնիկները և թէ նրանց ֆունկցիաները։ Նամանաւանդ չափազանց կարևոր է դառնում կօնտրօլը պետութեան կենտրոնական իշխանութեան՝ կառավարութեան վրա, որի ետևում կանգնած է պետութեան ամբողջ բիւրօկրատիան։ Բայց այդ կօնտրօլի գործադրութեան համար մինչև հիմա դեռ յայտնի չէ մի այլ միջոց, բացի ներկայացուցչական ժողովից։ Մինչև իսկ անմիջական օրէնսդրութեան կողմնակիցներն էլ չեն կարողանում ոչ մի այլ միջոց առաջարկել։ Կառավարութեան ու նրա չինօվնիկների վրա կօնտրօլ ունենալու իրաւունքը նամանաւանդ մեծ արժէք ունի փոքրամասնութեան, օպպօզիցիա կազմող կուսակցութիւնների համար. այդ բանը նրանց համար բոլոր պարլամենտական իրաւունքներից ամենաարժէքաւորն է։ Օրէնսդրական խնդիրների մէջ, շատ բընական է, նրանք շատ աննշան ազդեցութիւն միայն կարող են ունենալ։ Իսկ կառավարչական վարչութեան մէջ զեղծումներ բանալ ու պատշաճաւոր կերպով նրանց խարազանել կարող է և մի առանձին պատգամաւոր, եթէ նա ազնիւ է, քաջութիւն ունի ու յիմար չէ։ Մի քանի, ոչ-բազմաթիւ, ազնիւ և ճակատով քաղաքացիների ներկայութիւնը մինչև իսկ այնպիսի մի անոյժ և ստրկական պարլամենտում, ինչպիսին աւստրիականն է, կառավարութեան համար մի կատարեալ փուշ է հանդիսանում և մի որոշ չափով սանձահարում է բիւրօկրատիայի կամայականութիւնն ու ինքնիշխանութիւնը։

Ներկայացուցչական սիստեմի ոչնչացումը նշանակում է միևնոյն ժամանակ և կառավարութեան վրա եղած որևէ իսկական կօնտրօլի վերացում։ Ով ժողովրդային ներկայացուցչութիւնը կը վերացնի, նա միևնոյն ժամանակ կը վերացնի և այն ամբիօնը, որի վըրայից տիրապետող սիստեմի մեղադրողները կարող են ամբողջ ժողովրդին դիմել։ 10,000 սեկցիաներից իւրաքանչիւրում հռետորը դիմում է միմիայն ժողովրդի տասհազարերորդ մասին. նրա առաջ մինիստր չը կայ կանգնած, որը պարտաւորված լինի ամեն բանի պատասխան տալ, կամ, գուցէ, հարկ պիտի լինի 10,000 մինիստր նշանակել. իսկ գըրաւ եղծակցութիւնները նոյնպիսի աջողութեամբ կարող են ծածկել, ինչպէս որ հիմա ծածկում են շատ բան այն բոլորից, ինչ որ խօսում են մասնաւոր մարդիկ ժողովրդային ժողովներում և մինչև իսկ մամուլի մէջ։ Որպէսզի այդպիսի պայմաններում կարելի լինի մի որևէ խնդիր առաջարկել ժողովրդի քննութեանը, հարկ պիտի լինէր ամենալաւ դէպքում 10,000 անգամ աւելի շատ աշխատանք թափել, քան պարլամենտական դեբատների ժամանակ։

Րիտտինգաուզէնը, գուցէ, մտածում էր, թէ նրա պետութեան մէջ, անշուշտ, չեն կարող մեղադրանքներ ծագել մինիստրների դէմ, որովհետև վերջինները ժողովրդից ընտրված պիտի լինեն։ «Պետական գործերը ղեկավարելու համար նշանակված մինիստրների կօլլէգիան ընտրվում է ընդհանուր, ուղղակի ձայնատւութեան իրաւունքի հիման վրա» *)։ Բայց երբվանից է, որ ժողովրդի կողմից պաշտօնեայ ընտրվելը երաշխաւորութիւն է ներկայացնում ընտրվածի անաղարտ վարք ունենալու համար։ Հէնց ինքը Րիտտինգաուզէնն էլ չէ՞ ասում, որ անհնարին է մասնաւոր շահեր արտայայտողներին ընդհանուր շահերի պաշտպանութիւնը յանձնել, որ ժողովուրդը չէ կարող մաղաչափ անգամ վստահանալ իր ընտրած օրէնսդիրներին։ Միթէ նա չէ կրկնում Ժ. Ժ. Րուսսօյի այն խօսքերը, թէ անգլիացիք ազատ են լինում միմիայն պարլամենտական ընտրութիւնների օրը, կամ, գուցէ, նա ենթադրում է, թէ կարելի է պետական իշխանութիւնը ի չարը գործ դնելու առաջը առնել պարզապէս նրանով՝ որ այդ իշխանութիւնը յանձնված կը լինի ժողովրդի կողմից ընտրված մարդկանց։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԿՐԱՍՆՕՎՕԴՍԿԻՑ

Յունվարի 3-ին

Դեկտեմբերի 31-ին Կրասնօվօդսկի հայ հասարակութիւնը հոգևորականութեան հետ միասին դիմեց պարսից մզկիթը արտայայտելու իր սրտի խորին ցաւակցութիւնը հանգուցեալ Մուզաֆֆերէդդինի Շահի մահվան առթով։ Ժամի 10-ին խառն ամբոխը գտնվում էր մզկիթում։ Արարողութիւնը վերջանալուց յետոյ խօսեց Տ. Գարեգինը, շեշտելով որ հայերը խառնելով իրանց արցունքները Թուրք եղբայրների արցունքների հետ՝ ողբում են այդ անդառնալի կորուստը և յայտնում իրանց ցաւակցութիւնը. Տ. Գարեգինը խնդրեց պարսիկ հոգևորականութեան և ժողովրդին շնորհ բերել հայոց եկեղեցին, որտեղ պիտի կատարվէր հոգեհանգիստ։ Ժամի 11-ին պարսիկ հոգևորականութիւնը հիւպատոսի և ժողովրդի հետ եկաւ հայոց եկեղեցին. Հոգեհանգստի ժամանակ բոլոր Թուրք հասարակութեանը բաժանեցին մոմեր։ Խօսեց Տ. Արշաւիրը. Իր երկար ճառի մէջ նկարագրեց հանգուցեալի գործունէութիւնը, մարդասիրութիւնը և դէպի հայերը տածած սէրը. Ի լրումն մաղթեց ներկայ Շահին երկար կեանք։ Տ. Արշաւիրից յետոյ խօսեց պարսից հիւպատոսը, շեշտելով որ շատ կուլտուրական երկրներում, ուր կան որոշ քաղաքական օրէնքներ, տնտեսական կարգ ու կանոններ, օտար ազգերը էլի հալածվում են և չունեն հաւասար իրաւունքներ, ընդհակառակը Պարսկաստանը չունենալով որոշ օրէնքներ, կուլտուրապէս յետ մնացած, այսօր աւելի լաւ աչքով է նայում օտար ազգերին, ևս առաւել հայերին. «Ես հաւատացած եմ,—ասաց հիւպատոսը,—նոյն իսկ հայերը համոզված են, որ Պարսկաստանում աւելի լաւ է ապրում հայը, քան թէ Թուրքը, և ես այսօր և եթ կը յայտնեմ Թեհրան իմ կառավարութեան ձեր արտայայտած ցաւակցութեան մասին»։ Ժամի 12-ին վերջացաւ հոգեհանգիստը, և ժողովուրդը ցրվեց։

Մ. Տէր-Օհանեանց

ՆԱՄԱԿ ԱՍԽԱԲԱԴԻՑ

Յունվարի 4-ին

Պարսից Մուզաֆֆերէդդին Շահի մահվան առթիվ դեկտեմբերի 29-ին, ուրբաթ օրը, ռուսահպատակ և պարսկահպատակ հայ հասարակութիւնը, առաջնորդութեամբ քահանաների, այցելեց մէջիդը և իրանց քահանայ տէր Ատովմեանցի միջոցով յայտնեց ցաւակցութիւն և միևնոյն ժամանակ բարեմաղթութիւն արեց ներկայ Մահմադ-Ալի Շահի համար։ Իսկ կիրակի, 31-ին, Թուրք հասարակութիւնը հոգևորականութեան հետ այցելեց հայոց եկեղեցին, որին ներկայ էր և պարսից հիւպատոսը. խօսեցին հայր քահանայ Ատովմեանց, տէր-Կար. քահ. Վարդապետեանց և պ. Բաղդասարեանց. վերջինս Թուրքերէն խօսեց. պաշ խօսեց նաև ղազին. բոլորն էլ ցանկութիւն էին յայտնում, որպէսզի մոռացվեն վերջին երկու տարվայ եղբայրասպան կռիւները, և վերահաստատվեն խաղաղութիւնը և եղբայրութիւնը. մատնացոյց արվեց նաև այն, որ հանգուցեալ Շահը թոյլ չը տուեց կովկասեան ընդհարումները արձագանք գտնեն Պարսկաստանում, և այդ գործում փոքր դեր չէ խաղացել նաև ներկայ Շահ Մահմադ Ալին, երբ դեռ Թաւրիզումն էր։ Վերջում հիւպատոսը յայտնեց հայ հասարակութեան իր գոհունակութիւնը և խոստացաւ յայտնել Թեհրան։

Ամսիս 4 ին հետևեալ հեռագիրը ուղարկվեց Թեհրան.

«Նորին գերազանցութիւն արտաքին գործերի պ. մինիստրին.

«Ասխաբադի ռուսահպատակ և պարսկահպատակ հայ հասարակութիւնը ստանալով Նորին Մեծութիւն Մուզաֆֆերէդդին Շահ-Շահի մահվան բօթաբեր լուրը, հոգեհանգիստ կատարելով հանգուցեալ սիրելի Միապետի համար, վշտահար սրտով արկանում է առ ոտս Նորին Մեծութիւն Մահմադ-Ալի Շահի իր ցաւակցութիւնը։ Ըստ որում խնդրում ենք սոյն հեռագիրը արկանել առ ոտս գահոյից Նորին Մեծութեան Ասխաբադի ազգաբնակութեան անունից և շնորհաւորել Նորին Մեծութեան իր նախահայրերի գահը բարձրանալը։ Աղօթում ենք Աստծուն շնորհելու Նորին Մեծութեանը առողջութիւն և երկար կեանք իր հպատակների բարօրութեան համար։ Ատովմեան քահանայ»։

Ա. Ներսիսեան

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Յունվարի 1-ին

Դեկտեմբերի 26-ին հայոց դպրոցի շինութեան մէջ պ. Քրիստափոր Տէր-Աստուածատրեանի նախաձեռնութեամբ սարքվեց տօնածառ՝ յօգուտ Սղնախի ժողովրդական գրադարան-ընթերցարանի։ Հաւաքվել էր մեծ բազմութիւն՝ մօտ 250 հոգի՝ մեծեր և փոքրեր։ Նուագում էին զուռնա, սազանդարներ, գարմօնչիկ։ Փոքրիկները պարում էին, պտտելով վառած տօնածառի շուրջը, երգեր երգում, ոտանաւորներ արտասանում։ Ժամը 9-ին մանուկները հեռացան, ստանալով ընծաներ, ոբից յետոյ սկսվեցին պարեր մեծերի համար, որոնք շարունակվեցին մինչև ժամը 2-ը։

Հանդիսականները գոհ սրտով հեռացան, ստանալով հոգեկան զուարճութիւն։ Մուտքն եղաւ՝ տոմսակների վաճառումից 79 րուբ. 40 կօպ., բուֆէտից՝ 81 րուբ. 55 կ., ընդամենը 160 ր. 95 կ. Ծախսն եղաւ 114 ր. 65 կ.։ Զուտ արդիւնք մնաց 46 ր. 30 կ.։ Շնորհակալութիւն դպրոցի հոգաբարձութեան, որ ձրիաբար տուեց շինութիւնը։

Սղնախի ժողովրդական գրադարան-ընթերցարանը բացված է 1905 թ. սեպտեմբերին։ Տեղիս երիտասարդները գրադարան ուզում էին բանալ դեռ ևս սրանից 15 տարի առաջ, բայց դաժան ռէժիմի պատճառով չը կարողացան թոյլտւութիւն ստանալ. երեք անգամ զանազան ժամանակ խնդիրներ ուղարկեցին, բայց մերժում ստացան. վերջապէս անցեալ տարի բացվեց։

Գրադարանը սկզբում գտնվում էր արիստոկրատ վարչութեան ձիրքը. չէին ստացվում կանոնաւոր մի քանի լրագիրներ, ապա բոլորովին դադարեցրին լրագիրների ստանալը։ Անընդունակ վարչութիւնը հեռացվեց, թողնելով 50 րուբլի պարտք։ Պէտք է աճուրդով ծախէին գրադարանի կարասիքը՝ տան վարձը և գրադարանապետի ռոճիկը վճարելու համար։ Ահա այս ժամանակ, նոյեմբերին, պաշտօնի մէջ մտաւ նոր վարչութիւնը յանձին Յ. Գրիգորեանի, Ք. Տէր-Աստուածատրեանի, օր. Ա. Գօձեանի, Դ. Մաչաւարիանի և Ի. Խատիէվի։ Նոր վարչութիւնը վճարեց գրադարանի պարտքերը, բերել տուեց լրագիրներ և գործին տուեց կանոնաւոր ընթացք։

Ներկայումս գրադարանը ստանում է հետևեալ պարբերական հրատարակութիւնները՝ «Русскія Вѣдомости», «Биржевыя Вѣдомости», «Новѣйшая Библіотека», «Образованіе», «Нива», «Тифлисскій Курьеръ», «Кавказская Рѣчь» «Մշակ», «Ժամանակ», «Աշխատանք», «Խաթարալա», «Հայկին», «Զարի», «Մէգօբարի», «Ախալի Դրօէբա», «Նակադուլի»։

Գրադարանի ուղղութիւնը գծված է սրանից 15 տարի առաջ։ Նա պէտք է ունենայ հայերէն, վրացերէն և ռուսերէն գրքեր և պարբերական հրատարակութիւններ, ձգտելով այսպիսով սէր և համերաշխութիւն ամրապնդել հայերի և վրացիների մէջ։ Եւ ներկայ վարչութիւնն անշեղ ընթանում է այդ շաւղով։

Գրադարանի տարեկան ծախսը հասնում է մօտ 400 րուբլու (100 րուբլի բնակարանի վարձը, 100 րուբլի գրադարանապետին, մնացածը լրագիրներին, լուսաւորութեան համար)։ Անդամներից և տուփից ստացվում է ամսական մօտ 5 րուբլի։ Գրադարանի գոյութիւնը պահպանելու համար յաճախ տրվում են երեկոյթներ, ներկայացումներ։ Շնորհակալութիւն ենք արտայայտում պ. Սարգիս Յովակիմեանին, որը ձրիաբար իր խանութից տալիս է ամանեղէններ երեկոյթներում։

Սակայն չարել հասարակութեան ուշադրութիւնը միայն գրադարանի վրա նպատակայարմար չէ. մենք ունենք դարձեալ շատ ցաւեր դարմանելու, ուստի վարչութիւնը մըտադիր է խնդրել քաղաքից՝ տալ նպաստ գրադարանին տարեկան 100 րուբլի։ Յոյս ունենք, որ ձայնաւորները, որոնց մէջ կան մի քանի ինտելիգենտներ, կանցկացնեն այս առաջարկութիւնը։

Խնդրում ենք մեր հեռաւոր հայրենակիցներին՝ յիշել իրանց հայրենիքը և օգնել գրադարանին գրքեր կամ փող ուղարկելով։

Ծանր պայմանների տակ հայոց դպրոցի նոր հոգաբարձութիւնը մտաւ պաշտօնի մէջ։ Նա պէտք է վճարէ ոչ միայն ընթացիկ ծախսերը, այլև նախկին հոգաբարձութեան պարտքերը։ Նոր գանձապահ է ընտրված Սարգիս Յովակիմեան։ Պարոնի մէջ նկատվում է եռանդ և սէր առ ուսումնարան. նա աշխատում է, որքան կարող է։

Պ. Յովակիմեան ազատեց դպրոցը խայտառակ վիճակից, շինել տալով արտաքնոց երեք աչքով, և պատուիրեց սեղաններ։ Չը ստանալով նախկին գանձապահ Վարդան Ենիկոլոփեանից ոչ մի կոպէկ դրամ, այլ միայն պարտք, պ. Յովակիմեան բերել տուեց Թիֆլիսից ապարիկ բաւական քանակութեան մոմ և սկսեց կանոնաւոր մոմավաճառութիւն։

Մինչև այժմ մոմը ծախվում էր եկեղեցական խանութում թէ հատով և թէ գրուանքի տակ, որից ծագում էին թիւրիմացութիւններ։ Պ. Յովակիմեան վերացրեց այս անկանոն մոմավաճառութիւնը, թոյլ տալով խանութում ծախել միայն հատով և դեղին մոմ չեռվերտներով, իսկ մնացած մոմը գրուանքներով ծախում է իր խանութում։

«Մշակում» լոյս տեսած մեր մի քանի յաջողակ յօդուածները խորին դայրոյթ պատճառեցին նրանց, որոնց վերաբերում էին նրանք։ Հաւատացէք, Ստօլիպինը այնքան չէ վրդովվում մամուլի յարձակումներից, որքան Սղնախի պարոնները։ Անկարող լինելով ազնիւ ճանապարհով կռւել, նրանք դաւեր են սարքում, որոգայթներ լարում արժատից խեղդելու բողոքող ձայնը։

Եւ սրանք այն պարոններն են, որոնք հանդէսներում, խնջոյքներում, ժողովներում, մասնաւոր կերպով անդադար ազատութիւն են հրչում, ազատութիւն ջատագովում, ազատութիւն գովաբանում... Ազատութիւն խըղճի, խօսքի, մամուլի... Բայց երբ ազատ մամուլն իրանց կաշուն է դիպչում, նրանք համբերել չեն կարող։ Գովեցէք, փառաբանեցէք նրանց և դուք կը լինէք սիրելիներ. պախարակեցէք՝ կը հալածվէք։ Եւ որչափ կեղծ են նրանց բերաններից արտասանվող մամուլի ազատութեան ներբողները... Ողորմելի մարդուկներ. խղճալի էք դուք...

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տօղ (Շուշու գաւ.), դեկտեմբերի 25-ին

Երէկ, ամսիս 24-ին տրվեց մի երեկոյթ պարոն Սարգիս Իսրայէլեանցի ղեկավարութեամբ։ Երեկոյթը շատ աջող անցաւ։ Մուտքը ձրի էր։ Ամբողջ ժողովուրդը ուրախութեան մէջ էր, երբ տեսնում իր որդոց լուսաւորված ամբիօնի վրա երգելիս, ոտանաւորներ ասելիս և այլն, շնորհիւ նոր ուսուցիչ Սարգիս Իսրայէլեանցի, որն իր ամբողջ կեանքն ու հոգին նուիրել է մանուկ սերնդի և ազատութեան ճանապարհին։ Հետզհետէ մեր գիւղն էլ միանում է քաղաքներին, մանաւանդ այսպիսի տարիներում, թալանված, կողոպտված, ընդհարումներից կրակ դարձած, Երեկոյթում Սարգիս Իսրայէլեանցը մի ճառ արտասանեց, բացատրեց գրութեան նշանակութիւնը և խոստացաւ, որ այսուհետև էլ կը տայ մի շարք երեկոյթներ, ներկայացումներ և այլն։ Նոյնպէս երեկոյթում տոմսակներ բաժանեցին, որ յունվարի 1-ին կայանալիք տօնածառին (елка) ներկայ լինեն, որի իրեղէնները, արժողութեամբ 25 ր. նուիրել է Տօղ գիւղացի Բաքու-քաղաքում բնակվող միլիօնատէր Միխայիլ Իսրաելեանը. այդ նուէրը առաջին օրինակն է մեր գիւղում և որին յոյս ունենք կը հետևեն և մեր միւս հայրենակիցները, որոնց կը խընդրենք չը զլանալ իրանց նուէրները մեր գիւղի նորաբաց միդասեան-ծխական եկեղեցական դպրոցին և նոր բացվելիք դպրոցական գրադարանին։

Օտարական

Թիֆլիս, յունվարի 11-ին

Թոյլ տուէք ձեր յարգելի լրագրի միջոցով յայտնել մեր խորին շնորհակալութիւնը այն անձանց և հաստատութիւններին, որոնք կատարելով իրանց բարոյական վսեմ պարտականութիւնը, նպաստեցին հանգուցեալ ամուսնուս թաղման հանդիսին, պատճառելով մեզ գէթ մի փոքր հոգեկան մխիթարութիւն, բարիքար մարդկանց ուշադրութիւնն իմ դարձնում ուսման ծարաւ երիտասարդներիս կըրթութեան գործի վրա։ Լիայոյս եմ, որ իմ կոչը արձագանք կը գտնէ բարեհոգի մարդկանց սրտերում։

Վշտացած այրի՝ Ալմաստ Հախնազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք տիկին Միրզոյեանից 20 րուբլի հանգուցեալ դերասան Պետրոսեանի ընտանիքի օգտին։

Թիֆլիսի գեներալ-նահանգապետի հրամանով փակվել են զինւորական դրութեան ամբողջ ժամանակամիջոցում, վնասակար ուղղութեան պատճառով վրացիական հետևեալ լրագիրները. «Զարի» (Զանգակ) և «Ախալի Դրօէբա (Նոր Ժամանակ)։ Ձերբակալված են նրանց խմբագիր-հրատարակիչներ՝ Ն. Կուրդգիլաշվիլին և Դ. Դեգերէրիան, ինչպէս և գրաւված են նրանց տառերը։

Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է հայկական շաբաթաթերթ «Ընկեր»ի խմբագիր Ս. Ա. Թառայեանին՝ հրատարակել Թիֆլիսում ռուսերէն լեզուով գեղարուեստական շաբաթաթերթ, «Ընկեր» անունով։

Կովկասի բժշկական ընկերութեան նիստը նշանակված է յունվարի 16-ին։

Այսօր, յունվարի 12-ին, երեկոյեան 7 ժամին, գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում նշանակված է հայոց Ազգագրական ընկերութեան հրապարակական նիստը, ուր պ. Լէօն կը դասախօսէ «Հայոց գրականութեան զարգացումը XIX դարում»։ Մուտքը ընկերութեան ոչ անդամների համար էլ ձրի է։

Պատերազմ-դաշտային դատարանին են յանձնված Դիդկի ծխականների երէցփոխ Ալէքսանդր Ինդուէվայի սպանութեան մեղսակիցներից 20 հոգի, որոնց քննելու են զինուորական դրութեան կանոններով։

Թիֆլիսում, մայրաքաղաքների օրինակով, կազմվել է ժողովրդական համալսարանների ընկերութիւն, որը նպատակ ունի՝ հիմնել Թիֆլիսում և Թիֆլիսի նահանգում գիտական-լուսաւորիչ հաստատութիւններ, ինչպէս և աջակցել նմանօրինակ ձեռնարկութիւններին Անդրկովկասի սահմաններում։

Երէկ, երեկոյեան ժամի 5-ին, Մօսկօվսկի փողոցում իր բնակարանի առաջ սպանվեց օխրաննիյ բաժնի վերահսկիչ Ջէպիրգօ Սպանողը անյայտացել է։

Աւազակութեան, թալանի և կողոպուտների դէպքերը գնալով նուազելու փոխարէն աւելի են սաստկանում, կողոպուտի է ենթարկվում ոչ միայն հարուստը, այլ և հասարակ բանւորը։ Օրինակ, ամսիս 10-ին, երեկոյեան ժամի 10-ին, առաջին քաղաքային ապաստարանի գիշերօթիկ պաշտօնեայ պարուչիկ Մախօվը ապաստարան վերադառնալիս Մելնիչնիյ միջանցքում, ուր գտնվում է ապաստարանը, ենթարկվում է երեք անյայտ աւազակների կողմից յարձակման. նրանից տանում են վերջին 5 րուբլին, որը իր ընկեր զինուորականներից այդ օրը ստացել էր շորեր գնելու համար։

Յունվարի 10-ի գիշերը Թիֆլիսի հասարակութեանը լաւ յայտնի «կախարդված» Լօլաձէն մեկնել է Պետերբուրգ, ուր իր կոչման համապատասխան մի աչքի ընկնող պաշտօն է ստացել։ Քաղաքը վերջապէս ազատվեց տխրահռչակ «հերոսից»։

Թիֆլիսի դատաստանական պալատը երեք օր առաջ քննել է Սղնախի գաւառի բնակիչներ՝ Սօզր, Շաքրօ, Լիծօնա, Զուրաբ և Նիկօլայ Ջէդալաշվիլու գործը, որոնց 1905 թւին ընդդիմադրութիւն են ցոյց տուել ոստիկաններին և պահակներին, սրանց պաշտօնական պարտականութիւնները կատարելու ժամանակ։ Այդ գործը անցեալ տարի քննվել է նահանգական դատարանում և երդուեալ-ատենակալ-տարմատար Բարաթօվի պաշտպանութեամբ բոլորն էլ արդարացել են։ Դատախազի օգնականի վճռաբեկ բողոքագրի համաձայն գործը անցել է դատաստանական պալատը, որը հաստատել է նահանգական դատարանի վճիռը։

Քաղաքային 2-րդ գիշերային ապաստարանում անցեալ տարվայ դեկտեմբեր ամսում գիշերել են ընդամենը 6,512 հոգի, որոնցից 6,182-ը՝ տղամարդիկ, իսկ 303-ը կանայք են։ Մերժում են ստացել 67 հոգի։ Ապաստարանում հիւանդների թիւը 16 է։

Վետցէլի և Մալէքի գարեջրատների բանւորները խնդրամատոյց են եղել Թիֆլիսի նահանգապետին՝ թոյլատրելու բանալ գործարաններին կից գրադարան-ընթերցարան՝ ծառայողների ընթերցանութեան համար։

Արամ Գրիգորեանը բանտից արձակվելով աքսորվում է Թիֆլիսի գեներալ-նահանգապետութեան սահմաններից։

Անցած տօներին, հանգամանքից օգտվելով 5-րդ թաղամասի ոստիկաններ՝ Իլիա Կուրիեւնին և պ. Կուտալովը շրջելով տնից տուն, խանութից խանութ, փող են ժողովելիս եղել։ Մի տան մէջ նրանց մերժել են փող տալ, որից անբաւական կարգ ու կանոնի «պաշտպանները» մի քանի անգամ կրակել են օդում։ Տեղեկանալով այդ մասին, Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը կարգադրել է, որ յիշեալ ոստիկաններին աքսորեն Արխանգելսկի նահանգը։

Տանտէր Կեւսվաշվիլին, որի տան մէջ (1-ին թաղամասում) վերջերս ռումբ էր պայթել, Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետից 1000 րուբլի տուգանքի էին ենթարկել։

Յովսէփ Բէրուչէվը, Յարէթ Մարտիրոսեանը, Գաբրիէլ Կիշեանցը և Խէչօ Մուխտարօղլին աքսորվում են Աստրախանի նահանգը, ուր նրանք պարտաւորապէս ապրելու են 2 տարի շարունակ։

Մահմեդական «Ղուրբան բայրամ» տօնի պատճառով Թիֆլիսի բաղանիքները այսօր փակ կը լինեն։

«Баку» լրագրում կարդում ենք. «Յունվարի 6-ին, շաբաթ օրը, Հայոց Մարդասիրական Ընկերութեան դահլիճում կայացաւ հանդիսաւոր հացկերոյթ, որ սարքել էր հայոց ծխական դպրոցների հոգաբարձութիւնը։ Հացկերոյթից առաջ Զաւէն վարդապետը երգեցիկ խմբի մասնակցութեամբ մաղթանք կատարեց, որից յետոյ Աչոտ եպիսկոպոսը մի հակիրճ ճառով շնորհակալութիւն յայտնեց հանդիսականներին՝ ժողովրդական կրթութեան գործին աջակցելու նկատմամբ իրանց բարոյական պարտքը կատարելուն համար։ Վերջում նա ողջունեց բոլորին տօների առթիվ։ Աչոտ եպիսկոպոսից յետոյ հոգաբարձութեան անդամ Ա. Քալանթար մի կարճ զեկուցագրով պարզեց 1906 թւի ընթացքում հոգաբարձութեան ցոյց տուած գործունէութիւնը։ Մատնանշելով այն դժուար պայմանները, որոնց ժամանակ հարկ եղաւ դպրոցները բանալ, նա մէկիկ-մէկիկ թւեց այն միջոցները, որոնց ձեռք է առել հոգաբարձութիւնը՝ դպրոցների նիւթական դրութիւնը ապահովելու համար։ Ի միջի այլոց հոգաբարձութիւնը առաջարկեց հայ հասարակութեան, որ սա մի փոքր իրան զսպէ, որը և ընդունվեց ուրախութեամբ։ Հոգաբարձութիւնը յոյս ունէր Բագու քաղաքի հայ ազգաբնակութեան 12,000 ծխից ժողովել մօտ 60,000 րուբլի, սակայն իրականապէս ժողովվեց միայն 10,000 րուբլի։ Այդ հանգամանքը բացատրվում է այն զրկանքներով, որոնց ենթարկվեց վերջին երկու տարում Կովկասի համարեա ամբողջ հայ հասարակութիւնը։ Ներկայումս դպրոցները շատ մեծ կարիքներ ունեն, որոնց մէջ առաջին տեղը բռնում է իրեղէնների բացակայութիւնը։ Ծխական դպրոցների մանկավարժական խորհուրդը մեծ պասից մտադիր է կազմել ծնողական ժողովներ՝ միասին քննելու այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են դպրոցների կանոնաւոր գոյութեան համար։ Իր զեկուցման վերջում պ. Քալանթար դիմեց ներկայ եղողներին եռանդուն կոչով՝ օգնութեան գալ և նպաստել դպրոցների նիւթական ապահովման և հոգևոր զարգացման։ Հացկերոյթին ընդամենը ժողովվեց 1,035 րուբլի։ Հոգաբարձութիւնը յոյս ունի ստանալ կրկին գումարներ այն անձերից, որոնք այս կամ այն պատճառներով ներկայ չէին հացկերոյթին։ Նոյն օրը, հացկերոյթից յետոյ, Աչոտ եպիսկոպոսը Զաւէն վարդապետի և Բագուի հայ հասարակութեան ներկայացուցիչներից մի քանիսի ուղեկցութեամբ գնաց պարսից հիւպատոսի մօտ՝ Նորին Մեծութիւն Մահմադ-Ալիի գահ բարձրանալու առթիվ շնորհաւորելու համար»։

Գեներալ նահանգապետի առաջարկութեան հիման վրա, Մօսկվայի քաղաքապետը դիմել է համալսարանի ռէկտորին և միւս բոլոր բարձրագոյն դպրոցների դիրեկտորներին և խնդրել հաղորդել իրան բոլոր հրէայ ուսանողների հասցէները։ Այդ տեղեկութիւնները հարկաւոր են գեներալ-նահանգապետին, որը, Մօսկվայի ուսանողների մէջ բարդութիւններ առաջանալու դէպքում, մտադիր է հրէայ ուսանողներին արտաքսել մայրաքաղաքից։

(«Р. В.»)

Բելօստօկ քաղաքի նախկին պրիստաւ Շերեմետէվը, որի առողջութիւնը ներկայումս վերականգնվելու մօտ է և մինչև այժմ էլ բժշկվում է Օբուխովի հիւանդանոցում, մի քանի օր սրանից առաջ ստացել է երկրորդ նախազգուշացնող նամակը, որով յայտնում են նրան, որ հիւանդանոցից դուրս գալու դէպքում կը սպանվի և որ առաջիկայ մահափորձը աջողցնելու համար արդէն հնարաւոր միջոցները նախատեսված են։ Այդ նամակի շնորհիւ, Պետերբուրգի քաղաքապետը կարգադրել է յունվարի 1-ից ոստիկանական պահակներ նշանակել հսկելու հերթով այն հիւանդանոցը, ուր մնում է Շերեմետէվը։ Կողմնակի անձնաւորութիւններին, բացի ազգականներից և մի քանի բժիշկ ծառայողներից, նրա մօտ երթևեկողներին մանրամասն խուզարկութեան են ենթարկում ու ապա ներս թողնում։ («Стр.»)

Պետական Դումայի նախկին պատգամաւորների գործի քննութիւնը, «Русь» լրագրի ասելով, վերջացած է արդէն, բայց և այնպէս նրանց գործը քննվելու է ոչ կանուխ, քան փետրվարի 10-ը։

Իբրև ցաւալի «կիւրեօզ», «Русь»-ի ասելով, ստիպված պէտք է յիշատակել Պետերբուրգի հասարակութեան մի մասի տրամադրութիւնը։ Կահաւորված հիւրանոցներից մի քանիսի պատերից ցուցադրված են այսօրինակ յայտարարութիւններ. «Ուսանողներին և կուրսիստկաներին շինութիւններ վարձով չեն տրվում»։

Բէրդյանսկ քաղաքի բնակիչ Մակար Պանասեանը, իբրև հասարակութեանը վերին աստիճանի վնասակար անձնաւորութիւն, աքսորվում է Արխանգէլսկի նահանգը։

Զինուորական գլխաւոր դատախազ, սպանված գեներալ Պաւլօվի փոխարէն նշանակվելու է Պետերբուրգի զինւորա-նահանգական դատարանի դատախազ գեներալ Կօրէյօ։

Ուղղափառ դաւանութեան բոլոր կօնսիստօրիաները սինօդից հրաման են ստացել, որ խիստ հսկողութիւն նշանակեն իրանց թեմերի ստորադրեալ ծխական քահանաների վրա, մանաւանդ գիւղական քահանաների վրա, և եթէ որևէ մի բան նկատելու լինեն՝ անմիջապէս հեռացնեն պաշտօնից կամ տեղափոխեն հեռու և խուլ անկիւններ։ («Страна»)

1907 թւի յունվարի 1-ից, «Страна» լրագրի ասելով, երկաթուղային ժանդարմական ծառայողների ռոճիկները աւելացված են։ Այդպիսով մինչև այժմ 15 րուբլի ռոճիկ ստացողը այսուհետև, պէտք է ստանայ հետևեալ երեք կերպով 1) 25 րուբլի, 2) 30 ր. և 3) 35 րուբլի ամսական։

Սեվաստոպօլից հաղորդում են «Страна» լրագրին, որ ծովային վարչութեան իշխանութեան մէջ զեղծումներ են բացվել, որոնց կատարել են ծովային բարձրաստիճան ծառայողները։ Այդ զեղծումների մերկացումները երևան կը գան քաղաքական համոզմունքների համար մեղադրվող կապիտան Ստաւրակի և բժ. Միրիտիադիսի ու «Տերեց» զրահանաւի միւս օֆիցէրների գործի դատավարութեան ժամանակ։

Մայրաքաղաքի լրագրների ասելով, Պետերբուրգում յամառ լուր է պտտում, որ հետախուզական բաժանմունքի դէմ դաւադրութիւն է եղել կազմվում։ Ինչպէս հաղորդում են, ոստիկանական ագենտներին աջողվել է բանալ այն դաւադրութիւնը, որ ռումբի միջոցով յունվարի 1-ին պէտք է պայթեցվէր հետախուզական բաժանմունքը, ուր նոյն օրը ժողովվելու էին բարձրաստիճան ատրճանաւորները շնորհաւորութեան համար։ Դաւադրիչների ղեկավարը ստորին ծառայողներից մէկն էր, որի մօտ և գտնվել է մահափորձի պլանը և մանրամասնութիւնները։ Դաւադրութիւնը պէտք է կատարվէր պայթուցիկ նիւթերի միջոցով։ Քննութիւնը, «Пет. Лист.» լրագրի ասելով, կատարվում է խիստ գաղտնապահութեամբ։

Ներքին գործերի մինիստրութիւնը առաջադրել է մինիստրների խորհրդին փոխատւութեան միջոցով բաւարարութիւն տալ Սարատովի և Խերսոնի նահանգների ագրարական շարժումներից վնասված հողատէրերին։ («Стр.»)

Ինչպէս լսել է «Сегодня» լրագիրը, ապագայում ոստիկանութիւնը անակնկալ խուզարկութիւններ կատարելու ժամանակ գործադրելու է պրօժէկտոր։

«Харб. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ մօտ ժամանակներս մի հիմնարկութիւն Չինաստանից և Անգլիայից ստացել է մի հակ լրագրներ «չենզուրական թոյլտւութեամբ,» վաւերացված, որը ուղարկված է եղել անցեալ տարվայ մայիս ամսվանից։ Լրագրները անցել են Պետերբուրգի վրայով և, փոխանակ տեղ հասնելու 5—6 օրում, ստացվել են 6 ամսից յետոյ միայն։ («Новь»)

Ոստիկանական դեպարտամենտը շրջաբերականներ է ուղարկել ժանդարմերիայի կառավարիչներին, որով յայտնում է, որ ոստիկանական դեպարտամենտի ստացած տեղեկութիւններից երևում է, որ յեղափոխականների վրա եղած գաղտնի հսկողութիւնը շատ թոյլ է և կալանաւորութեան ու խուզարկութեան դէպքերը լինում են միայն այն ժամանակ, երբ կողոպուտներ ու սպանութիւններ են տեղի ունենում։ Ի հարկէ, դրանով անկարելի է լինում յեղափոխական գործողութիւնների ու ակտերի առաջն առնել։ Նախազգուշութեան միջոցներ պէտք է ձեռնարկել լայն չափերով և ամենավճռական ձևերով, որի համար մեծ եռանդով պէտք է գործեն գաւառական ոստիկանութեան ծառայողները, որովհետև նրանք աւելի են մօտ կանգնած հասարակութեանը։ Այդպիսով դեպարտամենտը գաղտնի հսկողութիւն է նշանակում ամբողջ հասարակութեան ու ազգաբնակութեան վրա։ («Страна»)

---

*) Սօցիալ-դեմօկրատական յօդուածներ, IV եր. 9։

Յունվարի 4-ին Պետերբուրգի ոստիկանամասերում մի փոքրիկ իրարանցում է տեղի ունեցել «Страна» լրագրի գրաւելու պատճառով։ Առհասարակ, գրաւած «կրամոլային գրականութիւնը» տանում են Օխտինսկի ոստիկանամասը, ուր առանձին սենեակ է յատկացված այդ նպատակով, որի վրա մակագրված է «Գրաքննչից արգելված գրքեր»։ Այդ պահեստը այժմ բոլորովին լցված է, այնպէս որ «Страна»-ի համարների համար այնտեղ տեղ չէ եղել։ Այդ հանգամանքը իրարանցման մէջ է ձգել Օխտինսկի մասի ադմինիստրացիային. չեն իմացել, թէ ինչ անեն մի քանի սայլ «Страна»-ի համարները։ Հեռագիրներ են ուղարկել ուրիշ ոստիկանամասեր, խնդրելով ընդունելու գոնէ կէս մասը։ Սակայն ամեն տեղից էլ պատասխանել են, որ «տեղ չը կայ»։ Այդ մասին դիմել են մամուլի գործերի գլխաւոր ինսպեկտորին, որը այսպէս է մակագրել գրութեան վրա. «Այսօր և ապագայում, եթէ պահեստում տեղ չը լինի, գրաւած ամբողջ գրականութիւնը այրել»։

(«Страна»)

—

Ռուսաստանի անկարգութիւնները ճնշելու համար գանձարանը երկու միլիոն րուբլի է ծախսել։ «Соврем. Мысль» լրագրի մէջ տպագրված այն լուրի պատճառով, որ ինտենդանտային վարչութիւնը 100.000 րուբլի գումար է բաց թողնել Պետերբուրգի զինուորական շրջանի սպաներին իբրև վարձատրութիւն անկարգութիւնները ճնշելու համար,—գլխաւոր շտաբը հարց է առել գլխաւոր ինտենդանտի վարչութեանը, թէ ճի՞շտ է այդ տեղեկութիւնը։ Դեկտեմբերի 30-ին գլխաւոր ինտենդանտի վարչութիւնը պատասխանել է, որ շրջաբերականի համաձայն վերջին տարվայ ընթացքում բաց է թողնված 1,904,000 րուբլի կրեդիտ, իբրև նպաստ այն սպաներին և աստիճանաւորներին, որոնք մասնակցութիւն են ունեցել անկարգութիւնների ճնշման գործում։ Ինտենդանտի թղթերի մէջ յիշված չէ գնդերի անունները, որոնց փող է տրվում. գաղտնիքը մնում է շրջանի շտաբի մէջ։ Այդ գումարների մեծ մասը բաժին է ընկել Սեմենովցիներին Մոսկվայի ապստամբութիւնը ճնշելու համար։ («Стр.»)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՆԳԼԻԱՅԻ ԴԷՄ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

I

Գերմանիան՝ դանդաղ, բայց յամառ քայլերով նուաճումներ է անում և՛ Պարսկաստանում։ Աբդիւլ-Համիդի խարխուլ կայսրութիւնը, իբրև խղճուկ որս, այլ ևս նրան չէ բաւականացնում. Վիլհելմը Միջագետքից աշխատում է իր ոտքերը երկարել և՛ հարևան անկազմակերպ պետութեան, Պարսկաստանի մէջ, շնորհիւ Բաղդադի երկաթուղու։ Թիւրքիայում և Պարսկաստանում շահագրգռված երկու գլխաւոր, մրցակից պետութիւնները անհանգիստ աչքերով են հետևում իրանց նոր, ճարպիկ, ուժեղ ախոյեանի առաջադիմութիւններին՝ իրանց ազդեցութեան ենթարկված մահմեդական պետութիւններում։ Գերմանիան այսուհետև մրցման մի նոր տարր է յայտնվելու ոչ միայն կարմիր բռնակալի երկրում, այլ և Պարսկաստանում։

Անգլիական հռչակաւոր օրգանը, «Թայմս»-ը, արդէն սկսել է ահազանգը հնչեցնել։ Գերմանիայի Պարսկաստանում արած նուաճումների մասին նա տպել է մի շահագրգռական առաջնորդող, որը հետաքրքրութիւնից զուրկ չէր լինի ներկայացնել մեր ընթերցողների ուշադրութեան։

«Պարսկաստանը ճանաչողներին շատ լաւ յայտնի է, ասում է անգլիական օրգանը, որ այդ երկրում անգլիական և ռուսական շահերը բացարձակապէս գերակշիռ են որևէ ուրիշ պետութեան շահերի հետ բաղդատելով։ Միջին-Ասիայի գործերին հմուտ անձինք միայն գիտեն, թէ ո՛րքան մեծ է Անգլիայի և Ռուսաստանի առևտրական շահերի գանազանութիւնը Պարսկաստանում, համեմատած ուրիշ պետութիւնների շահերի։ Բերլինի մեր թղթակիցը հաղորդեց Պարսկաստանի առևտրի մասին մի քանի թւանշաններ, որ հրատարակել էր գերմանական «Պոստ» լրագիրը։ Բայց դիտել ենք տալիս, թէ այս թւանշանները և՛ հին են, և՛ քիչ վաւերական, քան այն խիստ շահեկան և նորագոյն տեղեկագիրը, որ ուղարկել էր ֆրանսիական հիւպատոսը և որը մենք տպագրեցինք «Թայմս»-ում։ Ֆրանսիական հիւպատոսը հաստատում է, որ 1903—1904 թ. Պարսկաստան մտած ապրանքների համագումար արժէքն էր 7 միլիոն 700 հազար ֆունտ ստերլինգ, իսկ Պարսկաստանից արտածված ապրանքների արժէքը՝ 5 միլիոն 100 հազար ֆունտ ստերլինգ։ Սրանց մէջ ռուսական ապրանքները ներկայացնում էին 3 միլիոն 700 հազար ստերլինգի մի գումար, իսկ անգլիական ապրանքները՝ 2,560,000 ֆունտի մի գումար։ Ֆրանսիան գալիս էր երրորդը, 440,000 ֆունտ ստերլինգ գումարի ապրանքով, Թիւրքիան բռնում էր հինգերորդ տեղը 200,000 ֆ. ստերլինգի ապրանքով և Գերմանիան ութերորդ տեղը՝ 58,000 ֆ. ստերլինգի ապրանքով։

«Պարսկաստանի արտածած ապրանքներից Ռուսաստանն ընդունել է 3 միլիոն 100 հազար ֆունտ ստերլինգի ապրանք, Անգլիան (Հնդկաստանն էլ միասին) 420,000 ֆ. ստերլինգի ապրանք, Թիւրքիան 720,000 ֆ. ստերլինգի ապրանք, աւելի քան Անգլիան, և Գերմանիան ստացաւ միմիայն 4000 ֆ. ստերլինգի ապրանք Պարսկաստանից

«Այս թւանշաններից բացայայտ երևում են, որ մինչդեռ Անգլիայի և Ռուսաստանի տնտեսական շահերը խիստ մեծ են Պարսկաստանում, միւս եւրոպական պետութիւնները այնքան մեծ շահեր չունեն այնտեղ. մանաւանդ Գերմանիան, որ համեմատաբար շատ փոքր գործառնութիւններ ունի Պարսկաստանի հետ։ Այս պարագան խոստովանում է և՛ ինքը «Պոստ»-ը՝ աւելացնելով որ բովանդակ Պարսկաստանում կան միմիայն 49 գերմանահպատակներ։ Առևտրական գործերում գերման կառավարութեան ձեռներէց ոգու նշանաւոր մի օրինակ կարող է համարվել այն՝ որ այդ կառավարութիւնը «ի նկատի առել է Թեհրանում կառավարութեան կողմից իրան եղած առաջարկը՝ հիմնել մի գերմանական բանկ» մի այնպիսի երկրում, ուր գերմանական ներածումներն ու արտածումները այնքան մանրադիտական մի քանակութիւն են ներկայացնում առայժմ։

«Koeln. Zeitung»-ն ասում է, որ «Ն. մեծութիւն Շահի կառավարութիւնը ինքնաբերաբար արեց այդ առաջարկը գերմանական կառավարութեան, առանց գերմանական աղբիւրներից որևէ թելադրութեան»։ Այսինքն, պարսիկ կառավարութեան աչքին խփել է այն հանգամանքը, թէ ինչ՞ու գերմանացի վաճառականները ի զո՞ւր նեղութիւն են կրում իրանց ոչ այնքան կարևոր առևտրական գործողութիւններն օտար բանկերի միջոցով կատարելով։ Հետևաբար, Ն. մ. Շահի կառավարութիւնը ինքնաբերաբար այդ դարմանն առաջարկել է գերման կառավարութեան, որը շտապէ իրանից խնդրելու մի գերմանական բանկի արտօնութիւնը և գերման կառավարութիւնն էլ, մի լաւ մտածելուց, կշռելուց յետոյ, վճռել է ընդունել պարսիկ կառավարութեան այդ առաջարկը, «քանի որ գերմանական բազմաթիւ առևտրական տներ գործ են հաստատել, վերջերումս, Պարսկաստանում»։

«Դրանք, անկասկած, շատ շահաբեր գործեր լինելու չեն առայժմ, դատելով ներածումներից և արտածումներից, բայց գերմանացի առևտրականներն ու նրանց քամակին կանգնած հայրախնամ կառավարութիւնը յուսալից են, թէ ապագայում այդ գործերին կը տան մի շահաւէտ մղում։ Հետաքրքրական է նկատել, թէ գերմանացիները և իրանց կառավարութիւնը որ աստիճան իրանց ուշադրութիւնն ուղղել են այդ նոր շուկայի վրա այն օրից, երբ ճապոնական մեծ պատերազմը փոփոխեց Գերմանիայի արևելեան դրացու դիրքը Միջին-Ասիայում։ Մինչև որ այդ պատերազմի արդիւնքը բացայայտ երևան եկաւ, գերման կառավարութեան օրգանները կարևորութիւն չէին ընծայում իրանց երկրի «առևտրական նորաբողբոջ շահերին» մի այնպիսի երկրում, որը Ռուսաստանը յատկացրել էր իր առևտրին ու ինդուստրիային, որպէս տնտեսական ասպարէզ և որտեղ ուրիշ պետութիւններ չը պէտք է արգելք հանդիսանային իր խաղաղ թափանցման համար։ «Հինգ-վեց տարի առաջ, Գէորգ ֆոն Ցիմենս, Դէյչէ Բանկի հանգուցեալ կառավարիչը, գլխաւոր ջատագովն ու աջողեցնողը Բաղդադի երկաթուղու ծրագրի, բացարձակ յայտարարեց, թէ Գերմանիա առևտրական շահեր չունի Պարսկաստանում և երբէք էլ չէ ունենալու, որովհետև նրա համար առևտրական շահեր գոյութիւն չունեն այդ երկրում։ Բայց հեռաւոր-Արևելքի պատերազմից ի վեր այդ կարծիքները պէտք է որ փոխված լինեն։ Նախ քան մի գերմանական բանկի հաստատումը Թեհրանում, նոյն քաղաքում հիմնվեց մի գերմանական դպրոց և Համբուրգ-Ամերիկա գերմանական ընկերութիւնը շոգենաւերի մի կանոնաւոր երթևեկ հաստատեց Պարսից Ծոցի նաւահանգիստների միջև, և մի շարք փորձեր եղան ձեռք բերելու արտօնութիւն՝ արևմտեան Պարսկաստանում մի երկաթուղու շինութեան համար, որը մի օր կարողանայ ծառայել Բաղդադի գծին, հաղորդակցութիւններն երկարելով մինչև Պարսկաստանի սիրտը և այնտեղից, էլ հասոյթներ բերելով Բաղդադի գծին։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, դեկտ. 19-ին

Մեծ-Կամուրջի վրայի դէպքը

Երէկ, կէսօրէն երկու ժամ վերջ, ծովային երկու սպաներ կամուրջին ճիշդ մէջ տեղը յա՛ կարծ երեւնալով՝ սուրերնին մերկացուցած աջ ու ձախ շարժելով՝ անցուդարձ ընող ժողովրդին երթեւեկը արգիլեցին։ Պոլսէն Կալաթիա և Ղալաթիայէն Պոլիս անցնող ժողովուրդը սահմռկած աներեւակ խռ երթալ սկսաւ. ու կայծակի արագութեամբ կամուրջին երկու կողմերու ամբողջ վաճառատուները շաչող շառաչիւններով փակուիլ սկսան։ Այն վայրկեանին էր, որ Պոլիս անցնիլ կուզէինք, երբ խուժանը եա գալ սկսաւ, անմիջապէս Ղալաթիայի կամուրջին շատ մօտ եղող Ապիգիյէի պահականոցէն ոստիկաններ իրենց պետով վազեցին ծովայիններուն վրայ, և պետը հրամայեց, որ անձնատուր ըլլան, եթէ մահերնին չեն ուզեր. անմիջապէս երկուքը մէկանց «եթէ քայլ մ՛ևս փոխէք՝ ձեր մահը պիտի գտնէք» որոտացին քաջաբար. այն ատեն պետը իրեններով եա քաշուեցաւ և նոյն վայրկեանին դէպի Երլդըզ հեծեալ սուրհանդակ հանեց սուլթանին հրաման խնդրելու։ Մինչև վերադարձը մէկ ու կէս ժամ անցաւ, և Ղալաթիայի, սկսեալ Փէնջէ՛րբէ բազարէն մինչև Ղալաթիոյ հայոց եկեղ. վարժարանի մօտերը մինչև կամուրջ, քո՛ւյտի փողոցներով, և Պոլսոյ, Բանճէ-կափու, կամուրջին մօտերով, թուրք, հայ. յոյն, եւրոպացի և այլն ամբողջ մեծ ու փոքր վաճառատունները, բօրսան, Խաւեար-խանը և վերջապէս ամեն կողմ գոցուեցաւ, ժողովուրդը սահմռկած թիւնէլի կայարանէն մինչև կամուրջին գլուխը բնաւ պարապ գետին չերեւնալու չափ, ամբողջ քովընտի փողոցներով միասին կաղաժ ալիքները պէս անգիտակցաբար կը տարուբերէր, և ահա այդ ալիքը դէպի քարափը խուժեց, ոչ թէ ուզելով, այլ կարծես սարսափելի թաթառէ մը մղուած. մենք կարծեցինք, որ ծովը պիտի թափինք. ահագին ճարճատիւն նոյն տեղի սրճարաններուն ապակիներուն և սեղաններով։ Ո՛վ էր ընողը և ինչպէս կըլլար. հանդիսատես ըլլալովս հանդերձ չեմ կրնար բացատրել։ Ղալաթիոյ քարափին երկայնքը 40-է աւելի սրճարաններ են միայն. գասնէ աւելի սրճարաններուն ապակիներ, փեզկեր, աթոռներ, սեղաններ տապալեցան, ղարտակուեցան, փշրուեցան, անհետ, որոտալի աղեկտուր ճիչերով միասին մէկ ժամը աւելի տեւեց այս տեսարանը։ Տանիքները և շէնքերու պատուհաններն ալ ամբողջ լեցուն էին։ Մոռցայ ըսելու, որ ամբողջ բանքաները, ինչպէս և եւրոպական հպատակները դրօշնին պարզած էին անմիջապէս. նոյն տեղի ոստիկանութիւնը ժողովուրդէն աւելի սարսափահար պահականոց քաշուած էր։ Մինչ այս մինչ այն, թէ Պոլսոյ և թէ Ղալաթիոյ կողմերը հեռու պահականոցներէ նոր ջոկատներ եկան և կամուրջին երկու ծայրերը սկսան հսկել։ Երկու սպաները, մերկ սուսերնին մէկ ձեռքերնին և միւս ձեռքերնին ալ ըէվօլվէրներ, մէկը չէին մօտեցներ իրենց։ Եւ ահա Երլդըզէն եկած հրամանին համեմատ մի բարձրաստիճան զինուորական մօտեցաւ սպաներուն և չգիտցուիր թէ ինչ խոստումով կամ սպառնալիքով զէնքնկից ընել տուաւ և Ապիգիյէի պահականոցը բերելով անմիջապէս շղթայուեցան։ Խեղճ խուժանը, երբ այս տեսաւ, հանդարտեցաւ և կամաց կամաց սկսաւ ցրուիլ։ Ոստիկաններ ժողովրդեան ստիպեցին, որ խանութները վերաբանան, քանի մը յոյն և եւրոպացի վաճառականներէ զատ ամենն ալ բացին։ Բօրսան ալ թէև բացուեցաւ, բայց գործ չեղաւ. վաղն օսմ. թուղթերն պիտի իյնան։

Ականատես վկայէ լսեցի, որ նոյնը եղած է նաև Պոլսոյ կողմը։ Կամուրջի երթեւեկը սկսաւ։

Դրեթէ ամիսի մը չափ առաջ 500 ծովայիններու Կասըմ-Փաշայի թուրք գերեզմանատան մէջ ըրած ցոյցին—զոր եւրոպական թերթերն ալ գրեցին—շարունակութիւնն է արդեօք։

Կամ գուցէ ամսական խնդիր, ինչպէս կըսեն ոմանք, և կամ մի պարզ ցոյց զէնծ իշխանութեան դէմ։

Առ այժմ որոշ բան մը չգիտցուիր, վիրաւոր կամ մեռած չկայ։

Վոսփոր

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. (Ուշացած)։ Յունվարի 6-ին բարձրագոյն հաստատութիւն է գտել մինիստրների խորհրդի հետևեալ որոշումը. Նաւթային մթերքների ակցիզը ապահովելու համար իբրև գրաւական ներկայացվող տոկոսաբեր թղթերը պրոմիսլանների տէրերից և գործակալներից ընդունվում են այն գներով, որպիսիները նշանակված են ծխախոտի ակցիզը ապահովող այդ թղթերի ընդունելութեան համար։ Մնացած անձերից, որոնք նաւթային ակցիզը ապահովում են արժեթղթերով, վերջինները ընդունվում են գործաբանային գներով, յամենայն դէպս ոչ բարձր այն գներից, որ նշանակված են ծխախոտի ակցիզը ապահովող թղթերի ընդունելութեան համար։ Բայց և այնպէս վերջին դէպքում պետական տոկոսաբեր թղթերի գրաւ դնելու գները որոշվում են ոչ պակաս այն գներից որ սահմանված են բաց թողման պայմանների հիման վրա։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մինիստրների խորհրդին է ներկայացրել նախնական տնային կրթութեան վերաբերեալ մի նախագիծ, որով բոլորին իրաւունք է տրվում սկզբնական կրթութիւն ստանալ թէ վճարով, և թէ անվճար։ Իբրև դասագրքեր գործադրվելու են մինչև օրս գրաքննական կանոնների համաձայն տպված բոլոր դասագրքերը։ Անգրագէտների համար տարրական դպրոց բանալու մասին հիմնողը բացման օրից յետոյ կարճ ժամանակամիջոցում յայտնում է ոստիկանութեանը և ժողովրդական դպրոցների տեսչին։

Ռուսաստանի բոլոր կողմերից հաղորդում են չեղած սառնամանիքների մասին։

Յունվարի 8 ին Թագաւոր Կայսրին ներկայացաւ Թիֆլիսի դատաստանական պալատի նախագահ Կոչուբէյը։

ՀԱԱԳԱ, 10 յունվարի։ Ծովը կլանել է Սիմալէրի ափը։ Սումատրայի մօտ խեղդվել են 1500 մարդ։ Հանապազօր տեղի է ունենում ուժեղ երկրաշարժ. Վնասվածներին օգնելու համար մեկնեց նահանգապետը բժշկական պարագաներով։

ՓԱՐԻԶ, 10 յունվարի։ Կլէմանսօ, Բրիանը և Դիւսէնը պալատի ժամաժողովին են յանձնել մի օրինագիծ, որի համաձայն վերացվելու է հասարակական ժողովներ կազմելու ժամանակ նախօրօք ծանուցումներ ներկայացնելը։

ՏՕԿԻՕ, 10 յունվարի։ Մինիստր-Նախագահ Սայօնին յայտնել է, որ կառավարութիւնը վճռել է դիւրացնել բոլոր մեծ պետութիւններին Մանջուրիայում կատարած առևտուրը։

ԲԵՐԼԻՆ, 10 յունվարի։ Ֆրանսիական և սպանիական դեսպանները յայտնել են արտաքին գործերի մինիստրին, որ մօտիկ ապագայում հրաման կը տրվի, որ ֆրանսիական և սպանիական միացեալ էսկադրան վերադառնայ Մարօկկոյից։ Մարօկկոյի կառավարութիւնը յանձն է առել պաշտպանել կարգ ու կանոնը Տանժէրում և շրջակայքում։ Պէտք է յուսալ, որ Ալժէզիրասի կոնֆերենցիայի առաջարկած ոստիկանութիւնը անյապաղ կը մտցվի Մարօկկոյի կառավարութեան կողմից։

11 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յունվարի։ Ծովային մինիստր Բիրիլօվը պաշտօնից հեռացաւ։ Գեներալ-ադիւտանտ ծովակալ Դիկօվը նշանակվում է նաւատորմիղի հրամանատար։ Նրա օգնականը կը կառավարէ ծովային մինիստրութիւնը։

Ժամանակաւորապէս թոյլատրված է Մոսկվայի հրէայ վաճառականներին ստանալ 1907 թւի համար պրոմիսլական վկայականներ, առանց ներկայացնելու բնակվելու և առևտուր անելու իրաւունքի վկայաթղթեր, մինչև որ Սենատն այդ հարցը կը լուծէ ըստ էութեան։

ԱՍԽԱԲԱԴ, 10 յունվարի։ Ոստիկանութիւնը գտել է ռումբերի պահեստ, մեծ քանակութեամբ ուժանակ, տպարանական շրիֆտ, թռուցիկներ և անլեգալ գրուածքներ։ Ձերբակալված է մէկ հոգի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յուն. (Պաշտօնական)։ Ներքին գործերի մինիստրը մինիստրների խորհրդի քննութեանն է ներկայացրել յատուկ միջվարչական մասնաժողովի մշակած օրինագիծը՝ վերաբերվող բացառիկ դրութեան։

ՄՕՍԿՎԱ, 10 յունվարի։ Կովկասի ռազմիկ խմբի գործի առիթով կողմերը վիճաբանութիւններ ունեցան։ Դատախազը մեղմ կերպով պաշտպանեց մեղադրանքը։ Դատաստանական պալատը մեղաւոր ճանաչեց բոլոր մեղադրվողներին 126-րդ յօդուածով։ Երեքը դատապարտված են 1-ամեայ բանտարկութեան, 2-ը՝ 8 ամսով, հաշւելով նաև սկզբի բանտարկութիւնը։

ԼՕԶ, 10 յունվարի։ Այսօր բոլոր գործարանները փութաջանութեամբ աշխատում են։

ՀԱԱԳԱ, 10 յունվարի։ Պրօֆէսօր Մարդէնսը, որին ուղեկցում է բարոն Նօլդէն, բացի Հաագայից կայցելէ նաև Հռոմ և Վիէննա։ Կօնֆերենցիայի գումարման խնդիրը կը լուծվի այն ժամանակ միայն, երբ պրօֆէսօր Մարդէնսը իր ճանապարհորդութեան մասին զեկուցագիր կը ներկայացնէ։ Տեղումս այն կարծիքն է տիրում, թէ կօնֆերենցիան կը բացվի ոչ շուտ, քան ամառվայ կէսերին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յունվարի։ Նահանգական դատարանը դատապարտել է, «Око» լրագրի խմբագիր Իգնարին 7-օրեայ բանտարկութեան՝ Ֆօնարսկի միջանցքում տեղի ունեցած կողոպուտի գործի դռնփակ դատաստանական քննութիւնը հրատարակելու համար. «Народная Хозяйство»-ի խմբագիր Գօլուբէվին և նոյն լրագրի թղթակից Րիկաչէվին, առաջինին 4-ամեայ, երկրորդին 1-ամեայ բանտարկութեան, Մոսկվայի ապստամբութիւնը ճնշող զինուորների հասցէին վիրաւորական նախադասութիւններ գործադրելու համար. «Դումայի» խմբագիր Սուվօրինին՝ երեք շաբթվայ բանտարկութեան և 500 րուբլի տուգանքի Պէնզայի նախկին նահանգապետ Իւվօստօվին մատակարարական պատրաստութիւններ տեսնելու նկատմամբ անուանարկելուն համար։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 10 յունվարի։ Կիրակի և երկուշաբթի տեղիցս մեկնած «Եալտա» և «Պուշկին» շոգենաւերը դեռ չեն վերադարձել։ Կարծում են, որ նրանք զոհ են գնացել ծովային սաստիկ մրրկին։

ՍՕՖԻԱ, 10 յունվարի։ Ժողովում պատգամաւոր Գենադիէվը ուսանողական անկարգութիւնների առիթով առաջարկում է հպատակութիւն յայտնել իշխան Ֆերդինանդին. Ժողովը բուռն ծափահարութիւններով ընդունում է առաջարկը։

ԼՕՆԴՕՆ, 10 յունվարի։ Բրայսի տեղ Իրլանդիայի գործերի մինիստր է նշանակված ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բըրրէլը։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Վիճակահանութեան ժամանակ շահած տոմսերը։ 5 0-ական րուբլի տարան խաղարկու տոմսերի և սերիաների հետևեալ համարները.

№ Սերիաի. 11,384. № տոմ. 33,
12,086—7
13,512—19
18,576—39,
5,223—36,
4,446—24,
5,926,—42,
3,722,—43,
4,193—6,
10,680—31,
7,440—6,
14.266—5,
10,376—18,
11,137—7,
4.465—2,
202—32,
6,661—27,
9,686—50,
4,338—2,
18.907—3,
11,235—10,
18,445—44,
14,511—15,
16,053—23,
9,406—39,
5,163—9,
12 244—36,
2,383—32,
9,951—45,
4,496—35,
8.182—47,
3.423—32,
17,735—39,
12,592—32,
5,089—17,
4,782—10,
6,773—17,
19.993—10,
4,398—5,
2.855—8,
14 980—32,
10,263—24,
1,024—22,
12,815—8,
9.940—32,
12,247—25,
14,057—33,
1,131—19,
3,529—42,
9,355—27,
5,977—18,
17,343—14,
14,809—27,
4,123—14,
16,093—15,
14,418—3,
12,472—41,
1,113—9,
11,809—40,
10,259—17,
4,067—8,
4,824—24,
11,001—7,
44,999—21,
734—36,
19,933—39,
5,932—36,
4,838—14,
12,639—5,
11,272—28,
10,149—43,
12,253—10,
1,476—35,
16,983—33,
11,993—48,
11,985—40,
2,240—5,
13,359—32,
11,598—44,
11,557—16,
13,416—49,
8,869—24,
1,844—29,
6,919—6,
6,335—20,
5,962—18,
15,295—38,
17,872—17,
7,153—43,
1,306—11,
17,734—26,
132—4,
7,392—13,
6,619—12,
8,861—32,
13,598—34,
17,575—44,
18,064—3,
4,581—16,
7,767—10,
3,203—50,
19,920—49,
8,685—23,
4,485—50,
9,431—24,
17,589—10,
10,311—29,
3,163—44,
18,225—45,
12,247—22,
18,209—2,
15,198—46,
17,252—26,
18,600—32,
61,347—9,
4,194—8,
16,783—44,
10,579—41,
4,386—12,
7,116—37,
18,668—21,
6,217—5,
10,786—23,
16,980—18,
19,040—3,
14,325—20,
18,025—23,
5,136—35,
15,499—3,
9,441—29,
467—12,
14,106—32,
18,373—33,
16,821—15,
10,705—33,
19,835—22,
15,074—4,
2,554—27,
18,878—47,
19,145—47,
3,663—15,
6,411—18,
1,047—38,
11,169—33,
14,726—40,
12,440—45,
17,038—45,
6,343—6,
17,918—35,
16,216—20,
17,989—47,
9,855—11,
2,651—37,
13,224—19,
6,383—18,
11,065—18,
2,145—49,
12,368—0,
17,417—31,
19,580—3,
16,682—18,
326—18,
8,724—17,
12,688—18,
18,415—9,
6,733—33,
14,165—45,
8,308—20,
10,328—9,
11,182—27,
19 099—13,
7,051—35,
9,828—20,
—
7,414—17,
8472—11,
13,791—13,
13,211—7,
1,382—7,
4,421—5,
6,392—38,
986—30,
2,675—14,
13,076—34,
1,298—12,
17,694—40,
16,082—4,
17,437—48,
2,141—9,
2,066—6,
12,855—6,
4,763—43,
6,364—38,
13,669—19,
19,078—19,
4,913—9,
16,343—48,
9,588—7,
15,772—9,
5,029—3,
13,612—40,
16,486—16,
9,215—4,
2,667—15,
11,177—15,
1,361—5,
7,219—37,
6,103—13,
8,952—35,
9,259—9,
12,343—24,
18,997—18,
3,161—12,
11,933—45,
4 920—44,
18,837—37,
16,789—26,
4 666—50,
12,132—19,
6,109—36,
8,927—17,
5,882—14,
7,155—33,
7,790—1,
2,653—16,
1,110—37,
5,277—17,
16,849—45,
10,343—42,
12,302—47,
10,554—46,
637—40,
4,0 7—34,
9,855—21,
9,621—28,
6,195—12,
16,187—12,
12,461—9,
3,084—50,
13,116—43,
8,456—36,
14,706—50,
769—26,
11,874—2,
11,156—18,
1,959—23,
12,129—50,
16,904—43,
338—9,
4,586—38,
10,129—46,
15,899—45,
7,388—32,
10,519—50,
11,501—14,
6,629—21,
14,172—28,
10,934—34,
6,138—32,
9,990—21,
1,816—49.

Հանգած տոմսերը։
18,413
1,321
1,422
264
11,749
6,465
15,643
7,242
200
18,835
6,788
3,938
18 848
8.231
18,341
9,119
2,175
19,431
6,439
924
13,916
13,028
8,772
2,430
1,965
311
12.601
19,597
847
6,798
14,325
239
4,304
8 273
11,070
13,894
13,678
19,715
17,326
17,984
8,585
6,449
12,073
9,949
9.164
18,131
5,930
1,463
16.430
7,364
14,051
17,852
10,881
15,622
9,629
390
1,887
2,128
8.118
15,805
8,478
1,532
3,807
801
2,503
2,551
8,756
7,083
8,752
3,413
12,655
5,813
3,089
10,900
13,973
236
2,459
11,230
15,954
3.275
17,766
7,606
6,183
14,711
17,263
16,716
5,153
15,757
675
15,356
11,480
1,241
9,117
4,519
13,708
18,419
2,438
306
16,247
17,736
14,405
15,743
2,934
12,107
15,042
6,240
8,962
9,916
857
3.485
6,839
18,716
746
12,743
18,411
11,851
6,595
12,310
11,882
14,553
5,109
5,410
9,873
18,303
19.254
1,354
3,373
16,721
10.882
13,660
2,301
11.929
12,959
975
15.713
5,730
18,727
3.911
12 437
3,482
6,870
2,195
3,438
3,405
8,808
16,718
19,925
15,707
16,849
15,207
10.133
18.860
18,423
9,905.
6,941
8,270
5,920
8.697
1,481
2,212
15 443
5,543
750
16,775
16,138
12.193
6,289
15.821
16,155
9,867
238
5.437
16,835
646
3 857
5,863
3,079
3.311
18 664
9,015
15,037
18,376
15,690
6,242
14,243
15,957
9,008
6,333
13 901
8,817
1,448
2,446

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մէզամաս. հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԻՍՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութեան։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՀԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՋԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Յ. Դուբրենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Մ. ՓՕՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկաւոր։
Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Գ. Ջախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 81—150

Երկու տարի ժամանակով ընտանիքիս մէջ
ՀԱՐԿԱՒՈՐ Է
մի հայ երեխայասէր
Վարժուհի
երեխաներիս հետ պարապելու, ապրուստը կը լինի ընտանիքիս հետ միասին, հարկաւոր է նաև մի հայ
Խոհարարուհի
ցանկացողները պայմանների վերաբերեալ կարող են դիմել ինձ. Станція Омскъ Сиби. ж. дар. Азарапетъ Агаянцу. 3—5

Գիմնազիայի բարձր դասարանի մի աշակերտ ցանկանում է դասեր ունենալ. մաթեմատիկայից կարող է պատրաստել մինչև 7-րդ դասատուն։
Հասցէն՝ Водоподъемная, 9, близъ Коммерч. училища. (ու. կ.) 3—3

ՀՐԱՒԷՐ

Ս. Էջմիածնի սինոդի հրամանով ս. Սարգիս վանքը՝ ընդ անմիջական տեսչութեամբ Թեմակալ տէր առաջնորդի՝ յանձնվեց ծխերից ընտրված և կոնսիստորիայից հաստատված յիշեալ վանքի նորաբաց ուսումնարանի հոգաբարձուներին. ուստի տարուս յունվարի 14-ին, կիրակի առաւօտեան ժամը 11-ին, վերոյիշեալ եկեղեցում լինելու է երրորդ և վերջին ժողովը ընտրելու նոր երեցփոխան. և այս առիթով հրաւիրում եմ 22 տարին լրացած երկսեռ բոլոր ծխերին, որ շտապեն ներկայ լինել յիշեալ եկեղեցում ընտրութեան մասնակցելու.

Գործակալ ա. մ. Թիֆլիսի՝
Գրիգոր աւ. քահ. Մանդակունի
(ու. կ.) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երկուշաբթի, յունվարի 15-ին, երեկոյեան ժամը 9-ին նշանակված է պ.պ. անդամների

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

աւագանի և վերստուգիչ մասնաժողովի անդամներ ընտրելու համար, նաև քննելու և հաստատելու 1906 թ. հաշիւը և 1907 թւի նախահաշիւը, որից յետոյ կը կայանայ անդամների և կանդիդատների համար ընդհանուր ընթրիք, որի համար բիլետանիչը վճարելու է 1 ր. 40 կ. առանց գինու.

(ու. շ. կ.) 1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
երկրորդ տպագրութեամբ
Թուաբանական խնդիրներ
և օրինակներ
Մոսկվայի քաղաքային դպրոցների ուսուցիչների
Փոխադրեց և յարմարեցրեց հայ դպրոցների
ծրագրին
ԱՐՇԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆ
Ա. պրակ. Առաջին և երկրորդ տարի 30 կ.
Բ. պրակ. Երրորդ տարի . . 30 կ.
Գ. պրակ. Չորրորդ տարի (1 դասարան) 30 կ.
Մամուլի տակն է շուտով, լոյս կը տեսնի
Դ. պրակ Կոտորակներ—ըստ Շապոշնիկովի և Վալցովի։
Դիմել «Գուտտենբերգ» գրախանութին կամ ինձ Тифлисъ, Абасъ-Абадская площадь домъ Теймуразова-Спарапетяну.
Գումարով գնողներին զեղչ։
4—10

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
Գրավաճառանոցի հրատարակութիւն
Լոյս տեսաւ Սեդրակ Մանդինեանի կազմած
начальная русская
христоматія
для армянъ
դասաւանդութեան բացատրութիւններով
1. գրքոյկ
Գրքոյկը նոր ծրագրի համեմատ նշանակված է ծխական ուսումնարանների 3-րդ բաժանմունքի համար, բայց առայժմ կարող է գործածուել նաև 4-րդ բաժանմունքում կամ թեմակ. դպրոցի առաջին դասարանում։
8—10

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Սօլօլակ, անկիւն Բեհբութեան և Պասկևիչի փողոցների, № 33/15։
(ա. օ.) 86—100

ԾԱԽՎՈՒՄ Է
ԱՆԹՐԱՑԻՏ
60 պուդ կամ աւելի գնողները Թիֆլիսում ճանապարհի ծախս չեն վճարում։
Նոյն տեղ ծախվում է նաև ընտիր
ՋՈՐ ՓԱՅՏ
ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ. Հասցէն՝ Елизаветинская ул № 127, երկաթուղային վարչութեան կից։
(ու. շ. կ.) 4—5

ՈՐՈՆՈՒՄ ԵՆ
Համապատասխան պաշտօններ
Մի երիտասարդ փորձառու գործակատար և երկու նորեկ պատանիներ, խանութ-մագազիններում. պահեստատներում, գրասենեակներում, և այլ հաստատութիւններում։ Ամենքն էլ գրագէտներ են, թէ հայերէնում և թէ ռուսերէնում։
Հասցէն «Մշակի» խմբագրատուն. Լ. Դ.
2—3

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ
Թիֆլիսի կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը յայտարարում է, որ կրկին ստացված է
„ԳԵՂՈՒՆԻ“
Զուտ արդիւնքը յատկացրված է յօգուտ հայ տառապեալներին։ Ցանկացողները ստանալ այդ պատկերազարդ և շքեղ հատորը, որ դահլիճի ամենալաւ զարդն է և գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում, և մօտեցող տօների առիթով լաւագոյն նուէր կարող է հանդիսանալ, թող շտապեն ուղարկել 4 ր. և ճանապարհածախսի համար 40 կ., ընդամենը 4 ր. 40 կոպ., «Մշակի» խմբագրատունը, «Գուտտենբերգ» գրավաճառանոցը և կամ «Երկիր» լրագրի խմբագրատունը։ 8—10

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатная, Типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5